

4429

кп
-59



ՀՐԱՏԱՆԱԿ

№ 4

3KП

G-59

11 JUL 2005

1 DEC 2009

4076

ՈՎԻԵՐ ԵՆ ԲՈԼՇԵՎ

Թարգմ. աստերեկից Ա. Թ.

192

292



ԲԻՏԼԻՍ
1918

26 .07. 2013

4429


Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Ներկայ բրոշուրը գրած է սրանից մօտ ինն ամիս առաջ, Պետերբուրգի յուլիսեան ղեպքերից յետոյ, երբ բուրժուազիայից սարսափած մենչևիկներն ու հսերները, երկրի այն ժամանակեայ տէրերը, կառավարութեան սանձեղը տալով բուրժուազիայի ձեռքը, թոյլ տւին, որ նա հաշիւ տեսնի իր սխերիմ թշնամու՝ բուշևիկներէ կուսակցութեան հետ, հալածի, ոչնչացնի նրա կազմակերպութիւնները, խեղդի նրա մամուլը, ձեռքազալի ու փնդակահարի նրա անդամներին:

Բաւական ժամանակ է անցել այդ օրերից յետոյ և շատ բան է փոխուել մինչև այժմ Ռուսաստանում: Հալածուած բուշևիկները, որոնց ետևից գնաց ամբողջ ճնշուած Ռուսաստանը, հոկտեմբերի 25-ին կատարեցին երկրորդ յեղափոխութիւնը՝ տապալելով կապիտալիստների ու կալածատէրերի կառավարութիւնը և տեղը հաստատելով բանւորների ու գիւղացիների իշխանութիւնը: Այժմ ամբողջ Ռուսաստանում, բացի մեր խղճուկ Անգրիովկայայից, իշխանութիւնը գտնուում է Բանւորական, Չինւորական և Գիւղացիական Խորհուրդների ձեռքին, որոնք միասին կազմում են Ռուսաստանի Խորհուրդների Տեղեկատուական Կառավարութիւնը:

Այժմ Ռուսաստանը կառավարում են այդ Խորհուրդներէ համազուեմարում ընտրուած Գործադիր Կոմիտէն և Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը՝ ընկ. Լենինի նախագահութեամբ:

Այս կառավարութիւնը լինելով ճնշուած, շահագործուող գասակարգերի կառավարութիւն, իրագործում է այդ գասակարգերի



830-97

1016

իզէալները, վերացնելով հետզհետէ շահագործող դատակարգերի տիրապետութեան հիմքերը, դարձնելով արդիւնաբերութեան միջոցները—հողը, գործարանները, հաղորդակցութեան միջոցները և և այլն—ամբողջ ժողովրդի սեփականութիւնը և հող պատրաստելով սոցիալիստական արդիւնաբերութեան համար:

Այս յեղաշրջումը, սակայն, հեշտ չկատարւեց:

Բուրժուազիան, որ հանաք չի սիրում, երբ հարցը էր կենսական շահերին և վերաբերում, կատաղի, արիւնտայեղ կռիւ ըսկսեց ամեն քաղաքում, ամեն մի գիւղում, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ՝ ստից ու կեղծիքից սկսած մինչև էրզեն, կոտորած ողբամիջեան կոիւններ ու դաւաճանութիւն: Նա իր «հայրենասիրութիւնը» ժողովրդի հակայեղափոխական շարժումը գղարգիտները և կազմում և միանալով վիլհելմի զօրքերին՝ պատերազմում սեփական հայրենիքի դէմ՝ խեղդելու համար իրեն ատելի յեղափոխութիւնը:

Նրանից յետ չեն մնում յաճախ «յեղափոխական» ու «սոցիալիստ» կոչուող մենչեիկներն ու աջ էսէրները, որոնք բարբիկաղների միւս կողմն անցած կամ ուղղակի արաքին թշնամուն միացած (ինչպէս օրինակ՝ Նիկոլայեում, Խերսոնում և այլն) պատերազմում են յեղափոխական հարմիր զօրքի դէմ: Յետ չեն մնում նաև մեր մենչեիկները, որոնք այստեղ, Անդրկովկասում, թուրք, վրացի, հայ ու ամեն ազգի կալածատէրերի ու կապիտալիստներին հետ եղբայրացած հալածում, բանտարկում, զնգաւարում են բոլշեիկներին, փակում նրանց թերթերն ու ժողովները և թնգանօթներ ու զնգացիւրներ ուղարկում կալածատէրերից հողը խլող գիւղացիներին դէմ: Յեղափոխութիւնից ու սոցիալիզմից սարսափած այդ «սոցիալիստները», որոնք դեռ ևս համարձակում են բանտարկան մայիսի 1-ը տօնելու, միտժամանակ արգելելով բոլշեիկ բանտրներին միտինգները, ատելի լուսհամարեցին բանադետական Տաճկաստանի գիւղի ընկնելու քան սոցիալիստական Ռուսաստանի հետ կապւած մտը:

Այս ամենը տեղի է ունեցել ներկայ բրոշիւրը գրելուց մօտին ամիս յետոյ, ինչպէս վերեւ յիշեցինք: Այս Կանգամանքը, ըստ երևոյթին, պէտք է իջնեմէր գրքոյի արժէքը—նա պէտք է

հնացած համարւէր: Մակայն գրանից նրա արժէքը չի ընկնում, նա իր թարմութիւնը չի կորցնում: Աւանձնապէս հնացած չէ նա Անդրկովկասի համար, որտեղ մենք դեռ ևս նախ-հսկտեմբերեան, նոյնիսկ յուլիսեան պայմաններում ենք ապրում: Հետաքրքրական է այս բրոշիւրը նաև այն տեսակէտից, որ յուլիսից բրքրական է այս բրոշիւրը նաև այն տեսակէտից, որ յուլիսից յետոյ տեղի ունեցած դէպքերը փայլուն կերպով ապացուցեցին բոլշեիկներին ասածները և յատկապէս այն, թէ որքան լու էին նրանք ճանաչել ու զնաւատել Ռուսաստանում գործող դատակարգերն ու նրանց կուսակցութիւնները, մտնուածք մենչեիկներին ու էսէրներին:

Ա. Բ.

Վիլնիւմիւն օգնելու նպատակով որպէս թէ բոլշեիկները սկսել են Ֆրոնտում եղբայրանալ թշնամիների հետ, հրաժարել յարձակումից, խոսովութիւն ու երկպառակութիւն գցել զինուորների մէջ, իսկ թիկունքում և առանձնապէս Պետերբուրգում խառնակութիւններ սարքել. վերջապէս, 1917 թ. յուլիսի 3-ին և 4-ին խաղական ապստամբութիւն են առաջ բերել Կերենսկու «յեղափոխական» կառավարութիւնը տապալելու և իշխանութիւնը Խորհուրդների ձեռքը տալու համար:

Հրազդիբներն ասում են, թէ վճուած է Լենինին, Զինովին և ուրիշ բոլշեիկների դատի ենթարկել, մեղադրելով նրանց պետական դաւաճանութեան և կառավարութեան դէմ զինուած ապստամբութիւն կազմակերպելու մէջ:

Նրոնք բանտն են դրել բոլշեիկ Տրոցկուն*) (որ 1905 թ. Բանուորական Խորհրդի նախագահն էր) և բոլշեիկ Լուճաչարսկուն: *)

Բանտն են դրել բազմաթիւ զինուոր ու բանուոր բոլշեիկներին, փակել են նրանց լրագիրները և աւերածուք գործել այն շէնքերում, որտեղ նրանց կուսակցական կազմակերպութիւններն էին դաւնում:

Որպէսզի լաւ հասկանանք, թէ ովքեր են բոլշեիկները, հարկաւոր է իմանալ թէ ինչպէս է առաջ եկել այդ անունը, ով է հնարել և երբ ու ինչ մարզիկ են եղել այդ անունը դնողները:

Հարկաւոր է անպատճառ պարզել այդ, որովհետեւ բոլշեիկներին ամենից շատ հայեցում են հարուստները, կազիտալիստներն ու կալաժատէրերը, նրանց ուզում են դատել այն դատարանները, որոնք Նիկոլայ երկրորդին էին ծառայում և ժողովրդի ազատութեան համար կուսակցներին կախաղան բարձրացնում:

Բայց այստեղ մի բան անհասկանալի է մնում: Եթէ իսկապէս բոլշեիկները հարուստ մարզիկ են՝ էլ ինչու են նրանց հէնց հարուստները հայեցում. և թէ բոլշեիկները հարուստ մարզիկ են՝

*) Այժմ Տրոցկին ու Լուճաչարսկին Ռուսաստանի սոցիալիստական կառավարութեան անդամներն են, առաջինը՝ Բարձրագոյն Զինուորական Խորհրդի նախագահն է, երկրորդը՝ լուստարութեան կոմիսսարը:

Ո՞վքեր են իրենց բոլշեիկ (մեծամասնական) անւանում են ի՞նչ մարդիկ են նրանք:

Բոլշեիկների մասին տարածւած զգուշի բամբասանքները ամենից շատ կը լսես կապիտալիստների, կալաժատէրերի բերանից, նրանց ծառայող և ազատութեան բարեկամ ձեռքող պարոններից, թագաւորի կողմնակիցներից և նոյն իսկ այն մարդկանցից, որոնք իրենց սոցիալիստ են անւանում:

Ասում են, թէ՛ բոլշեիկները բուրժուաներ են, հարուստ մարդիկ են (և իբր թէ այդ է պատճառը, որ նրանք բոլշեիկ, այսինքն՝ ձեծամասնական են կոչուում), թէ՛ գողեր են նրանք՝ թաւնչիներ, սրիկաներ. վերջերս էլ պոչաւոր ստեր են տարածել, թէ բոլշեիկները և մանաւանդ նրանց զիւաւորները՝ ժողովրդի, բանուորների ու զիւղացիների ազատութեան համար կուռղ Լենինը, Զինովը, Կամենը, Կոլլոնապոյը և զինուորական Կազմակերպութեան ղեկավարները—մատնիչներ ու դաւաճաններ են՝ Գերմանիայի Վիլհելմ թագաւորից կաշուած:

Ասում են և գրում հարուստների լրագիրներում («Русское Слово», «Новое время», «Биржевая Вѣдомости», «Вечернее Время», «Русь», «Живое Слово» և հարիւրաւոր այլ լրագիրներ), թէ Լենինը և նրա ընկեր բոլշեիկները 20 միլիոն փող են ստացել Վիլհելմից, որ այդ փողերով են նրանք հրատարակում «Правда» և «Солдатская Правда» լրագիրները: որ այդ լրագիրներում նրանք աշխատում են զինուորներին համոզել, որ էլ չը պաշտպանեն մեր հայրենիքը, որպէսզի Վիլհելմը կաքողանայ սուսաներին ստիպել հաշուելու և ապա յաղթել անգլիացիներին, Ֆրանսացիներին և իտալացիներին:

ինչն էն նրանց այնպէս անխնայ գտածի և գտաու՞մ այն գտաու-
 ւորները, որոնց գտաաստանի աօկից (թէ նիկոլայի ժամանակ և
 թէ այժմ) հարուստը միշտ արգօր է դուրս եկել, իսկ ազքաաը՝
 մեղաւոր. եթէ բոլշևիկները հարուստ մարդիկ են՝ հապա ինչն
 են միլիոնաւոր բանւորները, զինւորներ և ազքաա գիւղացիներ
 իրենց բոլշևիկներէ շարքը գասու՞մ:

Հարկաւոր է այս բոլորը քննել և հասկանալ, որովհետե
 առաջ էլ էին հարուստները, թագաւորն և նրա կամակատարները
 մասնիչ ու գաւաճան անւանու՞մ այն մարդկանց, որոնք կաւու՞մ
 էին բանւորների և գիւղացիների, հողի և ազատութեան համար:
 Յրինակի համար 1905 թւին թագաւորի կամակատարներն ասու՞մ
 էին, թէ բանւորներն իրենց գործադուլները եաղօնական փողե-
 քով են սարքու՞մ: Դա մի սուա էր: Հէնց այս պատերազմի ժա-
 մանակ էլ, երբ զեռ նիկոլայը իր գահի վրայ էր, Միլիկովը, որ
 հարուստներից մէկն է և հարուստների կուսակցութեան անգամը,
 այն կուսակցութեան, որը չի ուզու՞մ հողը առանց վճարի տալ
 գիւղացիներին, նա, որ բոլշևիկներին դաւաճան էր անւանու՞մ.—
 Գուախովի բանւորներին հայնայու՞մ էր, թէ նրանք Վիլնիւմից
 կաշաւու՞մ են:

Ինչպէս յայտնի է, նիկոլայը մինչև անգամ կատորեց Գու-
 ախովի բանւորներին:

Նայն ձեռով չորրորդ Գեաական Դու՞մայի բանւոր անգամնե-
 րին—Մուրանովին, Գետրովսկու՞մ, Բազաւին, Շագովին և Սա՞մոյ-
 ւովին, այն մարդկանց, որոնք հէնց սկզբից դէմ էին պատերազ-
 մին—Թագաւորը մեղադրեց դաւաճանութեան մէջ և Միլիկ
 աքսորեց:

ժողովուրդը 1917 թւին թագաւորին գաւից զլորեց և ետ
 բերեց „այդ դաւաճաններին“ Միլիկից:

Եւ այդ բանւորները բոլշևիկ էին:

Բայց այստեղ մի դարձանալի բան կայ:

Ով բոլշևիկ է՝ բանւոր է կամ գիւղացի կամ իսկական յե-
 ղախութեան (Լենին, Ջինովկ, Կամենև, Տրոցկի և գրանց նման
 սոցիալիստները), այսինքն այնպիսի մարդիկ, որոնք իրենց
 կեանքը նւիրել են ժողովրդին:

Գարդ է, որ բանւորն ու գիւղացին էլ պէաք է լաւ քննեն
 ու հասկանան այն բոլոր մեղադրանքները, որոնք ամեն օր թափ-
 ւու՞մ են բոլշևիկների վրին:

Ինչ վաա բան էլ որ պատահի, որտեղ էլ պատահի, ամեն
 բանու՞մ, հարուստների ասելով, բոլշևիկներն են մեղաւոր, այսինքն
 այն հարիւր հազարաւոր բանւորներն ու բանւորուհիները, զին-
 ւորներն ու գիւղացիները, որ մանու՞մ են բոլշևիկների կուսակ-
 ցութեան մէջ:

Որպէսզի լաւ հասկանանք, թէ սվքեր են բոլշևիկները,
 առաջ լսենք, թէ նրանք ինչ են ասու՞մ և ինչ են ուզու՞մ:

Երբ որ մէկին մի բանու՞մ մեղադրու՞մ ես, արդարութեանը
 պահանջու՞մ է, որ մեղադրուողին էլ հարց ու փորձ անե՞մ. նրան
 էլ լսե՞մ: Մենք էլ այդպէս անենք, և հնար կայ այդ անելու, որով-
 նետե բոլշևիկները իրենց սեփական լրագիրներն են ունեցել՝
 «Правда», «Солидатская Правда», «Рабочий», «Водна» և հիմա
 էլ բազմաթիւ լրագիրներ ունեն:

Բայ անենք այդ լրագիրները և անանք, թէ ինչ են գրել
 նրանց մէջ բոլշևիկները:

Կարգու՞մ ենք «Правда» լրագիրը: Այդ թերթը Թուսասա-
 նի Սոցիալ-Դեմոկրատական Բանւորական կուսակցութեան Կենդ-
 բանական կոմիտէի օրգանն է, այսինքն՝ բանւորների կուսակցու-
 թեան գլխաւոր կոմիտէի լրագիրը:

Այդ թնչ կուսակցութեան է:

Այդ կուսակցութեանը, ինչպէս յայտնի է, միատեսակ մաա-
 ծող մարդկանց խումբն է, իրենց իրաւունքների համար միատե-
 սակ կերպով կաւոնների խումբը, բանւորների և ամենաչքաւոր,
 հազարուկ գիւղացիների և գիւղական մշակների կուսակցութեանը:

Հէնց այդ է պատճաաը, որ նա բանւորական կուսակցու-
 թին է կոչու՞մ:

Նրա մէջ հարուստներ չկան: Այնպիսի մարդիկ, ինչպիսին
 նախկին մինիստր կաղէա Շինգարեւովը, Միլիկովը կամ Գոնո-
 վալովն էր, չկան այստեղ, կաւաճատէրեր ու միլիոնատէրեր չէք
 գանիլ նրա մէջ. այդ կուսակցութեան անգամները, համարեա
 բոլորը, բանւորներ են, զինւորներ, գիւղացիներ, գիւղական
 մշակներ:

Այդ կուսակցութիւնը կոչուում է պեմօկրատական, որոնքն՝ ժողովրդական, որովհետև այդ կուսակցութեան անդամները կըուում են ժողովրդի՝ բանւորների ու գիւղացիների շահերի համար ընդդէմ կապիտալիստների ու կալաժատէրերի: Այդ կուսակցութեան անդամները տասնեակ տարիներ շարունակ կուել են թագաւորի դէմ, և թագաւորի կառավարութիւնը, ի միջի այլոց նիկոլայի մինիստր Ստոլիպինը, հազարաւոր բոլշեիկների կախազան է բարձրացրել 1905—6—7 և 8 թւականներին. սակայն ոչ թէ զաւաճանութեան համար, այլ այն պատճառով, որ բոլշեիկները թագաւորի դէմ կուում էին ժողովրդի ազատութեան համար, կալաժատէրերի դէմ՝ հողը գիւղացիներին տալու համար և կապիտալիստների դէմ՝ բանւորի կեանքի պայմանները լաւացնելու համար:

Բոլոր ճնշումների համար է կախ ժողովրդի բոլշեիկների կուսակցութիւնը: Իսկապէս բոլոր ճնշումների համար, այլ պատճառով էլ նա կոչուում է ոչ թէ սուս կամ սուսական, այլ Ռուսաստանի կուսակցութիւն. ոչ թէ միայն սուս բանւորն ու գիւղացին կարող են նրա մէջ մտնել, այլ բոլոր ազգերի բոլոր աղքատներն ու ճնշումները—սուս, ֆրանսիացի, գերմանացի, հրեայ, թուրք, սուրբի, հայ, վրացի և այլն:

Ճնշողի համար միևնոյն է, թէ ում է նա քերթում—սուսին, թէ թուրքին. ճնշածի համար էլ միևնոյն է, թէ ով է նրա ընկերը—սուսը, թէ հրէան, միայն թէ այդ ընկերը լաւ կուի ճնշումների՝ բանւորների ու գիւղացիների համար:

Բոլշեիկների կուսակցութիւնը իրեն սոցիալիստական էլ է անւանում: Այդ թնչ է նշանակում:

Կուսակցութիւնը սոցիալիստական է կոչուում այն պատճառով, որ նա ուզում է հիմքից փոխել ներկայ հասարակութիւնը: Ժողովրդի ամբողջ շփոթաբանութիւնն ու տանջանքները նրանից է, որ աշխարհը երկու մասի է բաժանւում—հարուստներ և աղքատներ: Հարուստները քիչ են, բայց ամեն բանի տէրն են՝ թէ հողի, թէ փողի, թէ գործարանների և թէ անտառների ու հանքերի. բայց ոչ մի աշխատանք չեն կատարում: Աղքատներն անթիւ են. աշխարհիս բոլոր հարստութիւնները նրանց աշխա-

տանքով է ստեղծուում, բայց ամեն բանից զրկւած են նրանք:

Պարզ է, որ սա անարդարութիւն է: Եւ հէնց այս անարդարութեան դէմ են կուում նրանք, որոնք իրենց սոցիալիստ են անւանում: Այդպիսի սոցիալիստ են բոլշեիկները, որովհետև ըստ սուսին տարուց աւել է, որ նրանք կուում են, որպէսզի աշխարհում հարուստներ և աղքատներ չլինեն, որ ամեն բան, ինչ որ բանւորի ձեռքով է ստեղծուում, ամբողջ ժողովրդինը լինի—հողը, գործարանները և այլն:

Պարզ է, որ այսպիսի կուսակցութեան մէջ հարուստը չի մտնել, որպէսզի է, որ այդպիսի մարդկանց դէմ հարուստները՝ ժողովրդի այդ թշնամիները՝ շարունակ սանր ու բամբասանքներ կը տարածեն:

Վերցնենք հիմա միւս փակած լրագիրը՝ «Солдатская Правда» թերթը:

Դա էլ է բոլշեիկական լրագիր: Նա բոլշեիկների կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի Զինւորական Կազմակերպութեան թերթն է:

Այդ այն կազմակերպութիւնն է, որի մէջ մտել են գանազան զորամասերի զինւորներ, որոնք զտնւում են թէ Ֆրոնտում և թէ Պետերբուրգում:

Այդ զինւորները գիւղացիներ են, նրանց մեծ մասը աղքատ մարդիկ են. նշանակում է, որ բոլշեիկների Զինւորական Կազմակերպութեան մէջ մտնողներն էլ են աղքատ մարդիկ և այն էլ գիւղացիներ:

Շնտա լաւ,—կասեն հարուստներին ու կալաժատէրերին հաւատացողները,—այդ բոլորը լաւ էր ստում. բայց այժմ մի հասկացրէք սեղ, թէ այս բողէիս բոլշեիկները ինչ են ուզում, ինչ են գրել ու ինչ են գրում իրենց լրագիրների մէջ՝ «Правда», «Солдатская Правда» և միւս թերթերում:

Կարգում ենք «Правда» և «Солдатская Правда» լրագիրները և տեսնում ենք, որ այժմ բոլշեիկների գլխաւոր պահանջները սրանք են—

առաջին՝ բոլշեիկները ձգտում են, որ բոլոր հողը իսկոյն և էթ անցնի գիւղացիների ձեռքը սուսնց վճարի:

երկրորդ՝ նրանք պահանջում են, որ շուտով վերջ արւի պա-
տերազմին այնպիսի պայմաններով, որ ոչ մի փոքրիկ տէրու-
թեան մէջ խեղճ ժողովուրդը չճնշւի, և

երրորդ՝ նրանք ձգտում են, որ Ռուսաստանում կառավա-
րութիւնն անցնի բանւորների և չքաւոր գիւղացիների ձեռքը,
որովհետեւ միայն այն ժամանակ կարելի է յոյս ունենալ, որ մեր
երկիրը կը փրկւի քաբուրքանգ լինելուց:

Այս պահանջները բոլշեիկները պաշտպանել են ամեն ժա-
մանակ և ամեն տեղ. հիմա էլ նոյնը պաշտպանում են թէ բե-
րանացի և թէ լրագիրներում, ժողովներում, բանւորական և
գիւղացիական Խորհուրդներում:

Այդ պահանջները (և շատ ուրիշ պահանջներ, որոնց մասին
մենք յետոյ կը խօսենք) բոլշեիկական համագումարների որո-
շումներն են, որ եղան 1917 թ. ապրիլ և յուլիս ամիսներին:

Այդ որոշումները սպազարած են առանձին դրօշակներում և
բոլշեիկական լրագրների մէջ, որպէս յաւելումներ «Солдатская
Правда» № 13 և «Рабочий и Солдатъ» № 13-ում:

Որպէսզի աւելի լաւ հասկանանք բոլշեիկների այդ պահանջ-
ները, աւելի մանրամասն ընենք, թէ ինչ են ասում նրանք:

Ինչո՞ւ են բոլշեիկները պահանջում, որ բոլոր հողերը անմիջա-
պէս խլեն (կոնֆիսկացիա արեն) և տրւեն գիւղացիներին:

Բոլշեիկների կուսակցութեան ծրագրի մէջ ասւած է, որ բոլ-
շեիկական կուսակցութիւնը չկուտէ է իր բոլոր ուժով, որ Ռու-
սաստանի բոլոր կալւածատէրական (նաև ուղեղնի, եկեղեցապա-
կան և այլն և այլն) հողերը անմիջապէս և ամբողջապէս կոն-
ֆիսկացիայի ենթարկեն:

Տեսնենք այս ինչ է նշանակում:

Կուել բոլոր հողերը կոնֆիսկացիայի ենթարկելու համար՝

նշանակում է ձգտել բոլոր կալւածատէրական, վանքապապական,
եկեղեցապապական, ուղեղնի հողերը անմիջապէս (առանց ուղաց-
նելու) խլել կալւածատէրերից, վանքերից և առհասարակ մաս-
նաւոր հողատէրերից:

Բայց կուել էլ կայ, կուել էլ:

Կարելի է հողը կալւածատէրերից խլելու մասին խօսել
բայց հող չաւ գիւղացիներին: Կարելի է հողի մասին լաւ-լաւ
բաներ գրել, բայց գիւղացիներին աւաջարկել՝ աչքը հողին դցած
պալատել, մինչև Հիմնադիր Ժողովը գումարւի, ինչպէս խորհուրդ
են տալիս գիւղացիներին սոցիալիստ յեղափոխականները և
մենշեիկները:

Բայց կարելի է և պէտք է, բացի խօսքի կուից բոլոր ուժով
կուել հողի համար, ինչպէս բոլշեիկների ծրագրումն է ասւած:

Բոլշեիկներն այդպէս էլ ասում են: Նրանք գիտեն, որ կալ-
ւածատէրը հեղաութեամբ, առանց վճարի, ձեռք չի քաշի հողից,
որ նա ամեն բան կանի, որ հողը գիւղացուն չը արւի:

Եւ որ զլխաւորն է՝ բոլշեիկները գիտեն, որ կալւածատէրե-
րը ուժով կը պաշտպանեն իրենց հողը:

Եթէ ձիշտ է այդ, նշանակում է, որ պէտք է ուժով էլ խը-
ւի հողը:

Բայց գիւղացիներն ու բանւորները կասն՝ շէլ ինչ ուժ ու-
նեն կալւածատէրերը, երբ բանւորներն ու գիւղացիները յաղթել
են և էլ թագաւոր չկայ:

Իսկ ինչ ուժ ունեն գիւղացիներն ու բանւորները, երբ
հինգ ամիս է թագաւոր չկայ, բայց դեռ գիւղացիները հող
չունեն:

Մեծ ուժ ունեն, կասն մեզ:

Ձիշտ է, մեծ ուժ ունեն, բայց հողը գործնաւ կալւածատե-
րերի ձեռքին է:

Այդ նրանից է,—ասում են սոց. յեղափոխականներն ու
մենշեիկները,—որ եթէ հիմա հողը զօտով խլենք, 1) խառնակու-
թիւններ առաջ կը գան, մի գիւղը միւսի դէմ գաւա կը գայ,
2) գիւղացիները Ֆրոնտում առանց հողի կը մեան, 3) անկարգու-
թիւն ու խառնաշփոթութիւն առաջ կը գայ գիւղում, որովհետեւ

հողը բաժանելը հեղա գործ չի, 4) հողը բաժանելը գիւղացիներէ մէջ թշնամութիւն կը գցի և 5) հողն անմիջապէս խլելը գերմանացիներէ հաճար օգտուէտ կը լինի, որովհետև Ռուսաստանում առաջ եկած ունեն ժի անկարգութիւն կը խանգարի պատերազմը կանոնաւոր կերպով առաջ տանել:

Տեսնենք ճիշտ է այդ:

Ամենից առաջ մի տեսնենք, թէ ինչու պէտք է անկարգութիւն լինի և ինչու պէտք է գիւղը գիւղի դէմ դուրս գայ, եթէ հողը անմիջապէս վերցնելու լինենք:

Բողբեկները, ընդհակառակը, այն կարծիքն են, որ այն ժամանակ աւելի շատ կարգ կը լինի, քան հիմա:

Ի հարկէ կարող է պատահել, որ երկու գիւղի մէջ վէճ առաջ գայ հողի պաճառով. բայց չէ՞ որ երկար վիճելուց յետոյ վերջ ի վերջոյ մի կերպ համաձայնութեան կը գան: Հողագուրկ գիւղացին հօ չի կարող առանց հողի նստել:

Բայց հազար անգամ աւելի շուտ կարող է պատահել, որ հարեան գիւղերի գիւղացիները, և ոչ միայն հարեան գիւղերի, այլև ամբողջ Ռուսաստանի բոլոր գիւղացիները վէճ ու կռիւ ունենան Ռուսաստանի բոլոր կալաւածատէրերի ու հարուստների հետ, քան թէ այդ աղքատ մարդիկ վեր կենան իրենց նման աղքատների դէմ:

Եւ քանի ուժեղ ու համերաշխ լինի աղքատ գիւղացիների կռիւը հարուստների ու կալաւածատէրերի դէմ, այնքան աւելի շուտ կարող է խեղճ գիւղացին իր կեանքը բարելաւել:

Ասում են նոյնպէս, թէ հողը կալաւածատէրերից խլելը անկարգութիւնների պատճառ կը դառնայ, որ գիւղացիք կըսկսեն թալանել ու հրդեհել:

Բողբեկները դրան պատասխանում են, որ դա սուտ է:

Առաջին գիւղացիք շատ լաւ են հասկանում, որ յիմարութիւն կը լինի թալանել ու այրել այն, ինչ որ իրենք պէտք է վերցնեն, և երկրորդ՝ բողբեկները խորհուրդ են տալիս հողը վերցնել կազմակերպւած ձևով, այսինքն ընդհանուր վճռով, ամբողջ համայնքի, ամբողջ գիւղի վճռով և այն էլ գիւղացիական պատգամաւորների խորհուրդի, գիւղացիական կոմիտէների ղե-

կավարութեամբ կամ այլ յեղափոխական կազմակերպութիւնների ու կոմիտէների առաջնորդութեամբ, որոնք պէտք է այնպէս կազմակերպւած լինեն, որ այդ խորհուրդներում և կոմիտէներում աղքատ գիւղացիները մեծամասնութիւն կազմեն:

Ելած հողերը պէտք է դանեն Գիւղացիական Գաղափարաւորների խորհուրդների իրաւունքի տակ կամ ուրիշ այնպիսի յեղափոխական կազմակերպութիւնների ձեռքին, որոնք կազմւած պէտք է լինեն գիւղացիների ձեռքով:

Ահա թէ ինչու բողբեկների կուսակցութիւնը պահանջում է, որ բոլոր հողը անմիջապէս անցնի գիւղացիների ձեռքը, որոնք պէտք է կազմակերպւած լինեն գիւղացիական Գաղափարաւորների խորհուրդներում կամ տեղական ինքնավարութեան ուրիշ կոմիտէների մէջ, որոնց պէտք է ընտրեն գիւղացիները իսկական զեմոկրատական եղանակով, այսինքն իսկական ժողովրդի, ամենաչքաւոր գիւղացիների ձեռքով և ազատ պէտք է լինեն բոլորովին կալաւածատէրերից ու չինովնիկներէց:

Ո՞րն է լաւ ձեռք համար,—հարցնում են բողբեկները,—հողը առաջայ պէս կալաւածատէրերի ձեռքին մնա, թէ անմիջապէս անցնի գիւղացիների ձեռքը:

Բողբեկներն ասում են, որ աւելի լաւ կը լինի, որ հողն անմիջապէս անցնի գիւղացիների ձեռքը:

Իսկ սոց-յեղափոխականները խորհուրդ են տալիս սպասել մինչև Հիմնագիր Ժողովը:

Ասում են թէ հողը հէնց հիմա խլել ու բաժանել, Ֆրոնտի ղեկավարներին հող չի ընկճել:

Դա ճիշտ չէ: Բողբեկները պահանջում են բոլոր հողերի նացիոնալիզացիա:

Ի՞նչ է նշանակում նացիոնալիզացիա: Գրա նշանակում է, որ բոլոր հողերի սեփականատէրը դառնում է պետութիւնը, ամբողջ ժողովուրդը: Սակայն այդ հողերի կառավարիչները լինելու են տեղական զեմոկրատական (ժողովրդական) հաստատութիւնները:

«Հողն Ասածունն է, հողը ոչ ոքինը չէ»,—ասում են գիւղացիները: Նշանակում է, որ հողը պէտք է պատկանի բոլորին,

Գուցի

ամբողջ հասարակութեանը և առանձնապէս ոչ որին չը պէտք է
զտականի. նշանակում է, որ հողը պէտք է գտնւի ամբողջ հա-
սարակութեան ձեռքին, նա պէտք է կառավարի հողերը իրենից
ընարած մարզկանց ձեռքով,—գիւղացիական պատգամաւորների
Սորհուրդների և այլ նման կազմակերպութիւնների միջոցով:

Ահա թէ բոլշեիկներն ինչ են ուզում:

Հասկանալի է, որ Ֆրոնտի զինւորները վախենալու ոչինչ
չունեն:

Ընդհակառակը, անհող մնալուց նրանք այն ժամանակ պէտք
է վախենան, եթէ մինչև Հիմնադիր ժողովը հողը գիւղացիների
ձեռքը չանցնի:

Ի հարկէ լաւ բան է Հիմնադիր ժողով գումարելը, բայց
դրանից աւելի լաւ բան կը լինի, որ Հիմնադիր ժողովը միայն
ընդունի իրենից առաջ արգէն կատարածը*):

Բանից զուրս է դալիս, որ ամենեին հիմք չը կայ վախե-
նալու, թէ գիւղում խառնաշփոթութիւն ու թշնամութիւն կառա-
ջանայ, քանի որ բոլշեիկները խորհուրդ չեն ստալիս հողը բա-
ժանել:

Հողը բաժանելու հարցը և այն, ինչ որ բոլշեիկներն են
ասում, իրարից բոլորովին տարբեր բաներ են. նրանք ուզում
են, որ բոլոր հողերը անմիջապէս անցնի ամբողջ ժողովրդի ձեռքը:

*) Յունվարի 5-ին գումարեց Հիմնադիր ժողովը: Նրա
անդամների մեծամասնութիւնը կազմում էին մանր-բուրժուական
տարրերը, զլխաւորապէս էսերները, որոնք Հիմն. ժողովի ընտ-
րութիւնների ժամանակ դեռ ևս վայելում էին ժողովրդի հաւատան
ու վստահութիւնը: Չարդ էր հէնց սկզբից, որ ժողովի այդ կազմը
չէր կարող ընդունել այն արժատական փոփոխութիւնները, որ
կատարել էին Ռուսաստանում երկրորդ յեղափոխութեամբ: Երբ
Բանուրա-Գիւղացիական կառավարութեան ներկայացուցիչը առա-
ջարկեց Հիմնադիր ժողովին ընդունել հոկտեմբերի 26-ի յեղա-
փոխութեան նշանումները և հաստատել հրատարակած դեկրետ-
ները (հողը ժողովրդին տալու, բանկերը նացիոնալիզացիայի են-
թարկելու մասին և այլն)—Հիմն. ժողովը մերժեց այդ առիւթը, և
Բանուրա-Գիւղացիական կառավարութիւնը ցրեց այդ ժողովը,
որն այլևս ոչ ժողովրդի կամքի արտայայտիչն էր, ոչ էլ յեղա-
փոխութեան բարեկամը:

Սոցիալիստ-յեղափոխականներն ու մենշեիկներն ասում են,
թէ հողը բաժանելը դժուար գործ է. Ռուսաստանը մեծ է, բոլոր
նահանգներում հողը միատեսակ չի, անկարելի է շուտով լա-
օրէնք գրել:

Այդ բոլորը ճիշտ է. բայց մանրամասնութիւններով զբաղ-
ւել, մանրամասն օրէնք գրել կարելի է և յետոյ. դա ջոկ բան է
հողը խլել բոլորովին այլ բան:

Հողը պէտք է խլել և անմիջապէս տրւի գիւղացիներին ա-
ռանց վճարի. դրա համար մեծ օրէնք հարկաւոր չէ գրել: Հար-
կաւոր է միայն հաստատել, որ բոլոր հողը ամբողջ ժողովրդինն
է և որ այսուհետև հողի կառավարիչները պէտք է տեղական
գիւղացիները լինեն՝ գիւղացիական պատգամաւորների Սորհուրդ-
ները կամ գիւղացիական յեղափոխական կոմիտէները. որ գիւ-
ղացիները էլ արեւոյ չպէտք է տան կալածատէրերին, որ կալ-
ւածատէրերի բոլոր ճորտաւիրական պահանջներին ու իրա-
ւունքներին վերջ է տրւում:

Այդպիսի մի օրէնք գրելն ու հաստատելը հեշտ է և կարե-
լի. իսկ մանրամասն կերպով բացատրելն ու տարածելը կարելի
է յետոյ:

Հիմա ժամանակ չը կայ երկար օրէնքներ գրելու, հիմա
պէտք է գործել:


«Շատ լաւ,—կասեն.—ենթադրենք դուք հողը խլել եք, ինչով-
պէտք է մշակէք այդ հողը. չէ որ ոչ մեքենայ կայ, ոչ անասուն-
ներ (կենդանի և մեռեալ ինվենտար), ոչ էլ մշակներ:

Ճիշտ է. քիչ է այդ ամենը. բայց բոլշեիկները պահանջում
են, որ թէ մեքենաները և թէ անասունները խլեն հարուստնե-
րից և կալածատէրերից և տրւեն կամ գիւղացիական խորհուրդ-
ներին կամ գիւղացիական յեղափոխական կոմիտէներին:

Ինչ վերաբերում է մշակներին, անհրաժեշտ է գիւղ ուղար-
կել պատերազմում վերցրած գերիներին և քաղաքներում նստած
մեր ձրիակեր կանանց ու տղամարդկանց:

Մինիսար Կերենսկին աւելի լաւ կանէր՝ փոխանակ կա-
նանցից կազմած մահու և քառալիոններ ուղարկելու Ֆրոնտ, նը
բանց գիւղ ուղարկէր՝ զինւորների կանանց օգնելու:

830-97



Անա թէ ինչու բոլշեիկների կուսակցութիւնը պաշտպանում է այն կոմիտէների արած բայրերը, որոնք Ռուսաստանի շատ տեղերում կալաժատէրերի կենդանի ու մեռելախնամները տալիս են այդ կոմիտէներում կողմակերպւած գիւղացիների ձեռքը, որպէսզի այդ ինժեներները հասարակականօրէն կողմակերպւած ձևով գործ ածել բոլոր հողերը մշակելու համար:

Հիմա պարզ է, թէ ինչու չեն սիրում բոլշեիկներին կալաժատէրերն ու կապիտալիստները և զանազան աղաներն ու նրանց կուսակցութիւնները—կողմաները, էսերները և մենշեիկները:

Պարզ է, թէ ինչու են բոլշեիկներին դաւաճան ու մատնիչ անւանում: Կալաժատէրերի ու նրանց բարեկամների համար ձեռնառու է, հարկաւոր է, անհրաժեշտ է բաժնասել, զրպարտիլ բանւորի ու գիւղացու առջ բոլշեիկներին, այսինքն նոյն բանւորներին ու գիւղացիներին, որոնք ժողովրդի համար կուսում են ոչ թէ խօսքով, այլ գործով:

Հէնց այդ է պատճառը, որ կալաժատէրերը բաժնասում են բոլշեիկներին:

Իսկ սոցիալիստ-յեղափոխականները, որոնք շատ լաւ գիտեն, որ այդ բոլորը սուտ է, լուկ են և փոխանակ բոլշեիկներին՝ պաշտպանելու, կամ բաժնասողների ջազացի ջուրն են աւելացնում կամ լուծում են:

Հարցնող լինի՝ թէ իրենք, այդ սոցիալիստ-յեղափոխականները շատ բան են արել, որ գիւղացիները հող ունենան:

Համարեա ոչինչ: Նրանցից ամենալաւը, երկրագործութեան միւստր Չերնովը լուծում է կալաժատէրերին, ամեն բանում նրանց զիջում է. նա մեծ դժւարութեամբ է կարողացել նրանց համաձայնութիւնն ստանալ, որ Հիմնադիր ժողովը իրաւունք ունենայ մինչև մաշա եղած հողը առ ու ծախը, կապւած պայմանները չհեղած համարել:

Նշանակում է, որ սոցիալիստ-յեղափոխականները չեն կամողանում ստիպել կալաժատէրերին, որ նրանք հողերը չձախչեն, և զրա պատճառն այն է, որ նրանք կալաժատէրերի

հետ մի կառավարութեան մէջ նստած՝ չեն կուսում նրանց հետ, այլ նրանց ետեից են գնում:

Անա թէ, որտեղ է դժբախտութիւնը: Բանից դուրս է գալիս, որ ոչ թէ բոլշեիկներն են մատնիչ ու դաւաճան, այլ նրանք, ովքեր չեն կուսում կալաժատէրերի ու կապիտալիստների դէմ. նշանակում է, որ ոչ թէ բոլշեիկներն են գերմանացիների օգտին գործողները, այլ նրանք, ովքեր խայտառակ կերպով ստորագրում են մահաւան պատժի օրէնքը, ովքեր փակում են համագումարները, ովքեր համաձայնում են բանւորներին ու զինւորներին ձերբակալել:

Եւ այս բոլորը կառավարութիւնն է անում, իսկ այդ կառավարութեան մէջ նստած են մենշեիկներն ու էսէրները՝ Սկոբելը, Նիկիտինը, Չերխանովը, Չերնովը:

III.

ինչ վերաբերումը ունեն բոլշեիկները դէպի պատերազմը:

Մենք զբաղւեցինք հողի հարցով և տեսանք, որ հողի վերաբերմամբ բոլշեիկները նոյն պահանջներն ունեն, ինչոր ամենաչքաւոր գիւղացիները:

Տեսնենք այժմ, թէ ինչ հայեացք ունեն բոլշեիկները պատերազմի մասին և ինչպէս են ուզում նրան վերջացնել:

Այս պատերազմը, որի նմանը աշխարհը չի տեսել, այս կործանիչ և բոլոր պատերազմներից արիւնահեղ պատերազմը ռուս ժողովրդի ձեռքով չի սկսւել,—ստում են բոլշեիկները,—այդ արել է, առանց ժողովրդի կամքը հարցնելու, յանցագործ, անառակ Նիկոլայ II միացած իր միւստրների ու գեներալների հետ՝ կապիտալիստների ու կալաժատէրերի շահերի համար:

Բայց այդ դեռ քիչ է: Այս պատերազմը սկսել են ամբողջ աշխարհի բոլոր մարզակներն ու աւազակները—գերմանական,

առուսական, ֆրանսիական և իտալական կապիտալիստները, հաբուստներն ու բռնակալները:

Ոչ մի երկրում, ոչ Անգլիայում, ոչ Գերմանիայում, ոչ Ռուսաստանում, ոչ Ֆրանսիայում, ոչ Իտալիայում հասարակ ժողովուրդը, բանւորներն ու գիւղացիները յանցանք չունեն այս անիծւած սպանդանոցն ստեղծելու մէջ: Այս պատերազմը երկրներ տիրելու, երկրներ կողոպտելու պատերազմ է, կամ ինչպէս ուսումնականներն են ասում՝ իմպերիալիստական պատերազմ է:

Տեսնենք ձիշտ է այդ: Չիշտ է արդեօք, որ պատերազմը սկսել են ոչ թէ ազգերի ազատութեան համար, ոչ թէ գիւղացիներին հող տալու համար, այլ մի խուճաբ կապիտալիստների, բոլոր երկրների ժողովրդակիր հարուստների գրպանները լցնելու համար:

Քննենք, տեսնենք:

Ամեն մարդ գիտէ, որ ամբողջ աշխարհում, ինչպէս և Ռուսաստանում, աշխատողը ժողովրդի մեծամասնութիւնն է, գլխաւորապէս բանւորներն ու գիւղացիները, իսկ այդ աշխատանքի բոլոր պտուղները գտնուում են սակաւաթիւ մարդկանց, կապիտալիստների ձեռքին: Ամեն բան պատկանում է կապիտալիստներին,—թէ հողը, թէ գործարանները, թէ երկաթուղիները, թէ տները, պալատները և թէ փողը. այնինչ բանւորները ոչինչ չունին, բացի իրենց բանւորական ուժից՝ իրենց ձեռքերից: Այդ բանւորական ուժը, ձեռքերը, բանւորներն ապրանքի պէս ծախում են կապիտալիստին և փոխարէնը ստանում են ապրանքներ:

Բանւորների պատրաստած ապրանքները կապիտալիստը ծախում է և օգտոււմ, որովհետև նա բանւորին այն աշխատավարձը չի տալիս, ինչ որ պէտք է օար, այլ շատ աւելի պակաս է վճարում:

Բանւորի գործադրած ուժի մի մասը կապիտալիստը չի վարձատրում և այդ է պատճառը, որ նա օգուտ է ստանում: Եթէ, օրինակի համար, բանւորը 8 ժամ է աշխատել, կապիտալիստը այդ 8 ժամայ աշխատանքի համար այնքան է վարձ տալիս, ինչքան նա պէտք է, օրինակ, 4 ժամայ համար վճարէր: Եթէ իսկական ձեռով վարձատրէր աշխատանքը:

Չորս ժամայ աշխատանքը կապիտալիստը չի վարձատրում. հէնց այդ 4 ժամն է նրա եկամուտի աղբււրը:

Ոչոտեղից է առաջ գալիս կապիտալիստների ահագին օգուտները. կապիտալիստը 4 ժամի համար է միայն փող տալիս, ըայց ինքը 8 ժամի գին է առնում այդ ապրանքը ծախելիս:

Այդպէս է առաջ գալիս կապիտալիստի կապիտալը, այսինքն այն արժէքը, որը նոր արժէք է ստեղծում:

Որտեղ նոր արժէք, օգուտ չի ստեղծում, այնտեղ կապիտալ չկայ. իսկ որտեղ կապիտալ կայ, այնտեղ էլ նոր արժէք, օգուտ կայ:

Այդ օգուտը, ինչպէս վերև ասացինք, առաջ է գալիս ներանից, որ բանւորի աշխատանքի մի մասը կապիտալիստը չի վարձատրում: Պարզ երևում է, որ կապիտալիստը կողոպտում է, բանւորին:

Եւ քանի շատ է կապիտալիստը կողոպտում բանւորին, այնքան նրա կապիտալը մեծանում է. և քանի մեծանում է կապիտալը, այնքան աւելի շատ օգուտ կարելի է ստանալ այդ կապիտալից՝ աւելի շատ բանւորներ վարձելով, մեծացնելով ու ընդարձակելով արդիւնաբերութիւնը (գործարանը, հանքանոցը և այլն):

Իրենց ընթացքով կապիտալիստները բոլորն էլ միատեսակ են—բոլորն էլ ուրիշի հաշիւն են ապրում: Բայց իրենց պարագանքով և ունեցած կապիտալով իրարից տարբերւում են—կան մոռնող և ունեցած կապիտալով իրարից տարբերւում են—կան խոշոր, միջակ և մանր կապիտալիստներ. կան գործարանատէրեր, վաճառականներ և բանկիրներ: Կապիտալիստների մի մասը բանւորների ձեռքով ապրանքներ է պատրաստում, միւս մասը այդ ապրանքները առնում ու ծախում է, մի մասն էլ շահով փող է տալիս, կրեդիտով է ապրում:

Կապիտալիստներ կան, որոնք անչափ հարուստ են, դրանք շատ քիչ են. միջակ կապիտալիստները աւելի շատ են, իսկ մանրերի թիւը մեծ է:

Եթէ մարդ լաւ մտածի, կը հասկանայ, որ քանի գնում այնքան աւելի է դժուարանում փոքր կապիտալով գործ սկսելը: Այդպիսի փոքր կամ միջակ կապիտալ ունեցողին մեծ կապիտա-

լիստը շուտով կը խեղդի: Միշտ և ամեն տեղ յաղթողը մեծ կապիտալիստն է, մեծ գործարանատէրը, մեծ վաճառականը, մեծ բանկը:

Այդ բանը ամենից լաւ երևում է այն ժամանակ, երբ արգիւնաբերութիւնը և առևտուրը կանգ է առնում, երբ հարիւրաւոր մանր ու միջակ կապիտալիստներ սնանկանում են: Դիմացողը միայն մեծ արիւն խմորներն են, որոնք աւելի են մեծանում և աչքածակ դառնում:

Դրանց կապիտալները հաւաքուած են առանձին հաստատութիւնների մէջ—բանկերում, որոնք ամբողջ աշխարհի տէրն են:

Վերջինք, օրինակի համար, Ռուսաստանը: Ռուսաստանի կապիտալիստների ամենամեծ կապիտալը գտնուած է 19 բանկերում, որ ոչ թէ մի միլիոն է կամ հարիւր միլիոն, այլ մի քանի հազար միլիոն: Նա 8 միլիարդից աւելի է, այսինքն ութ հազար միլիոն (8,235 միլ. ռուբլի):

Այդ բանկերի գլխաւոր զեկովարները ամենահարուստ ռուս կապիտալիստներն են, ինչպէս օրինակ՝ Գուչկովը, Բաբուշինսկին, Կոնովալովը, Տերեշչենկօն*, Մարգովը և զրանց նման արիւն ձծողների մի խմբակ, որոնք ամբողջ Ռուսաստանը իրենց ձեռքն են առել:

Այդ դեռ քիչ է: Ամենախոշոր բանկերը ամենասերտ կապերով կապած են արտասահմանեան բանկերի, արտասահմանեան կապիտալիստների հետ,—ռուսական բանկերի մէջ ամենամեծ բաժինը պատկանում է Ֆրանսիական կապիտալիստներին (55%), ապա գերմանական կապիտալիստներին (35%), յետո՛ւ արգէն անլիսացիներին (10%):

Այդ արտասահմանեան կապիտալները տաք տեղ են գտել զանազան կապիտալիստական միութիւնների, ընկերութիւնների մէջ (սինդիկատների, սրէստների, կարտելների մէջ): Այդպիսի միութիւններ են կազմել բոլոր անաւանների տէրերը (Պրոդու-

* Գուչկովը, Կոնովալովը և Տերեշչենկօն Կերենսկու ժամանակաւոր Կոսովարութեան միջխտրներն էին: Ա. Թ.

զոլ), երկաթեղէնի գործարանները, նաւթահանքերը, ցեմէնտի գործարանները և այլն:

Ինչ են անում այդ 19 խոշոր բանկերը: Նրանք ա՛րողջ արգիւնաբերութիւնն ու առևտուրը իրենց ձեռքն են առել: Նրանք են փող աւալիս գործարաններ շինելու, երկաթուղիներ օնցկացնելու, մեծ առևտուր սկսելու: Նրանք իրենց գերին են դարձրել մինչև անգամ պետական գանձարանը, որովհետև կառավարութիւնը առանց բանկերի չի կարող մի կողէկ փոխառութիւն անել:

Ամեն տեղ, ինչ գործի մէջ էլ մասնակցեն բանկերը, ահագին օգուտներ են վերցնում, և իրենց այդ օգուտների համար նրանք պատրաստ են ամենքին ծախելու:

Արտասահմանում՝ Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում և Ամերիկայում հարուստների բանն աւելի լաւ է. այնտեղ կապիտալներն ու կապիտալիստներն աւելի են խոշոր:

Ֆրանսիայում չորս ամենախոշոր բանկեր ամբողջ երկիրը իրենց ձեռքն են առել: Գերմանիայում ամբողջ արգիւնաբերութիւնն ու առևտուրը երկու-երեք բանկի ձեռքին է և մինչև անգամ Վիլհելմը խոնարհ ծառայի պէս վիզը թեքում է այդ բանկերի առաջ: Ամերիկայում բոլոր հարստութիւններն ու ամբողջ իշխանութիւնը մի քանի տասնեակ խոշոր միլիարդատէրերի ձեռքին է. նոյնը Անգլիայում և իւրաքանչիւր կապիտալիստական երկրում:

Այդ խոշոր կապիտալիստներից կախումն ունեն հազարավոր մանր կապիտալիստներ, որոնք ճնշում ու խեղդում են աւելի մանր գործարանատէրերին, խանութպաններին և իրենց ճորտը դարձնում միլիոնաւոր բանւորներին ու գիւղացիներին:

Եւ քանի մեծանում ու հարստանում են սակաւաթիւ խոշոր կապիտալիստները, այնքան մանրերի համար դժուարանում է կուել նրանց գէմ:

Մանր գործատէրերը կամ ոչնչանում են, կամ գերի են դառնում մեծ գիշատիչի ձեռքին:

Այդ է պատճառը, որ մի ահագին տէրութեան մէջ ամեն բան կառավարում է հարուստների մի փոքրիկ խմբակի ձեռքով:

Վերցնենք մի օրինակի Խոշոր գործարանատէրերը իրենց երկաթեղէնի գործարաններում թնդանօթներ են պատրաստում և առհասարակ ամեն տեսակ զէնք ու զրահ, որ զօրքին հարկաւոր է: Հասկանալի է, որ նրանք կախումն ունեն այն կապիտալիստներից, որոնք երկաթ ու պողպատ են պատրաստում: Այդ կախումն առանձնապէս զգացուում է այն ժամանակ, երբ զէնք պատրաստելու մեծ պահանջ կայ: Այդ կախումից ազատ լինելու համար թնդանօթ պատրաստող գործարանները տէրերը իրար հետ ընկերանում են և կազմում թնդանօթային գործարանների սինդիկատ: Այդ ընկերութիւնը կամ միանում է պողպատի գործարանատէրերի հետ, կամ՝ եթէ նրանք հակառակում են՝ բանկերի օգնութեամբ բաց է անում իր սեփական պողպատի ձուլարանները և առհասարակ իր հալոցներն ու մետաղագործարանները:

Այսպիսով միևնոյն մարդիկ իրենց ձեռքին ունենում են թէ՛ երկաթեղէնի և թէ՛ երկաթ ու պողպատ պատրաստող գործարաններ: Բայց պողպատ ստանալու համար հարկաւոր է երկաթի հանք: Ուրեմն պէտք է կամ հանքատէրերի հետ միանալ, կամ գնել այդ հանքերը: Այստեղ օգնութեան հասնողը դարձնալ բանկն է: Բայց առանց անուխի ոչ մի գործարան չի կարող բանել: Նշանակում է, որ պէտք է կամ միանալ անխաղճների հետ, կամ գնել անխաղճները: Օգնութեան հասնողը էլի բանկն է: Բացի այդ, թէ՛ թնդանօթները, թէ՛ պողպատը, թէ՛ հանքը, թէ՛ քարածուխը հարկաւոր է մի տեղից տեղափոխել ուղած տեղը: Նշանակում է՝ ամբողջ արդիւնաբերութիւնը կախումն ունի երկաթուղիներից ու նաւերից: Ամենազօր բանկը այստեղ էլ է օգնութեան հասնում:

Այսպիսով մի քանի մարդիկ, ինչպէս օրինակ Ամերիկայում, իրենց ձեռքն են առնում համարեա բոլոր գործարանները, հանքերը, երկաթուղիներն ու նաւերը:

Եւ որովհետեւ փողը բանկերն են տալիս, այդ պատճառով ամենքը և ամեն ինչ բանկերի գերին է դառնում:

Բայց քանի բանկերը հարուստ են լինում, քանի խոշոր են լինում կապիտալիստները, այնքան վատթարանում է բանուորները և զիւղացիների դրութիւնը:

Կապիտալիստներն ինչպէս ուզում են, այնպէս էլ վարում են բանուորների հետ: չէ որ պետութեան մէջ ամբողջ իշխանութիւնը կապիտալիստներն ու բանկերը փողով գնել են:

Միայն այն մարդկանց դրութիւնն է լաւ, ով կապիտալիստներին օգնում է բանուորներին ու զիւղացիներին քերթելու, այդ բախտաւորները խժեհներներն են, դիրեկտորները և կապիտալի միւս սպասաւորները, բացի դրանից այն գործատէրերն ու խանութպանները, որոնց դեռ մի առ ժամանակ խնայում է կապիտալիստը:

Բանուորներն ու զիւղացիները աղքատանում են: Ապրուստը քանի գնում՝ դժարանում է: Ամեն ինչ թանկանում է, որովհետեւ կապիտալիստը ապրանքների գինը աւելացնում է, առանց միևնոյն ժամանակ բանուորների աշխատավարձն աւելացնելու: Դեռ մինչև անգամ իջեցնում է աշխատավարձը:

Բանուորը ամեն բանից զրկում է իրեն: Չզիւղացին կէս գնով իր հացը ծախելով գնում է կալաճատիրով լծի տակ մտնում:

Այնինչ կապիտալիստը քանի գնում՝ աւելի մեծ քանակութեամբ է ապրանք արտադրում: չէ որ ծախու ապրանքը հետըզհետէ շատացնելով կարող է նա իր օգուտը հետզհետէ մեծացնել:

Մի տարօրինակ բան է առաջ գալիս. ապրանք շատ կայ, գնող չկայ, որովհետեւ ոչ բանուորը, ոչ զիւղացին փող չունեն: Այն շուկան, որտեղ կապիտալիստը իր ապրանքը ծախում է, նեղ է նրա համար: Կապիտալիստը նոր շուկայ է որոնում: Բայց քանի որ ամեն կապիտալիստի համար առաջին շուկան իր հայրենի շուկան է (ուրտի համար՝ Ռուսաստանը, գերմանացու համար՝ Գերմանիան), այդ պատճառով, երբ այդ շուկան նեղանում է իր համար, կապիտալիստը իր ապրանքներն ուղարկում է օտար երկրներ:

Իհարկէ կապիտալիստն ամենից առաջ գնում է այնպիսի երկիր, որտեղ արդիւնաբերութիւն չկայ, որտեղ իշխանութիւնը թոյլ է, որտեղ ինքը դիմադրութեան չի հանդիպի:

Այդպէս վարւեցին անգլիացիք՝ տիրելով Հնդկաստանին, Ա.Ֆ.

բիկայի ու Ամերիկայի մեծ մասին, համարեա ամբողջ Աւստրալիային ու մասն Չինաստան. Ֆրանսիացիք՝ որոնք տիրեցին Աֆրիկայի ու Չինաստանի ուրիշ «մասերին» ու այլ երկրներ. նոյնը արեց Ռուսաստանը, տիրելով Սիբիրին, Կովկասին, Բուխարային, Խիվային ու Պարսկաստանի մի մասին:

Այդ երկրներում ապրում են վայրենի կամ կիսակիրթ ժողովուրդներ. նրանք զօրք, հրացան ու թնդանօթներ չունեն: Լուսաւորւած կապիտալիստները այդ երկրները մանոււմ են թնդանօթներով ու զինւթներով:

Եւ ինչ ենք տեսնում. համարեա ամբողջ աշխարհը բաժանւած է արդէն խաշոր յափշտակիչների մէջ—Աֆրիկայի հարիւր մասից միայն տասը մասն է մնացել, որ կապիտալիստները դեռ չեն տիրել. Աւստրալիայում հարիւրից միայն մի մասն է ազատ մնացել. ուրիշ շատ անդերում ամբողջ երկիրը նրանց ձեռքին է:

Եւրոպական տէրութիւնների վերցրած այդ հողերին կոլոնիա (գաղութ) են ասում: Ամենամեծ կոլոնիաները գտնոււմ են անգլիական և ֆրանսիական կապիտալիստների ձեռքին:

Գերմանացիների ունեցած կոլոնիաները քիչ են. հասկանալի է, թէ ինչու գերմանացի կապիտալիստները վաղուց է, ինչ երազում են կոլոնիա խլել մէկից, նոր շուկայ ձեռք բերել:

Եւ ինչպէս առաջ անգլիական կապիտալիստները կուոււմ էին հողանդական, խալանական ու ֆրանսիական կապիտալիստների դէմ, մինչև որ վերջ ի վերջոյ յաղթեցին բոլորին ու աշխարհի տէրը դարձան, այնպէս էլ այժմ գերմանական կապիտալիստներն են վճել կուով շուկայ բաց անել իրենց ապրանքների համար:

Բայց աշխարհը արդէն բաժանւած է հին զիշատիչների մէջ. նրանց աւելացել են նոր զիշատիչներ—ուսները, ամերիկացիք, եսպանացիք, որոնց համար իրեց հայրենիքը նեղ է:

Եթէ Սերբիան վերցնեն՝ ուս, ֆրանսիացի և իտալացի կապիտալիստները կը խանգարեն. Տաճկաստանը վերցնեն՝ նոյն ուսները, ֆրանսիացիք, իտալացիք և անգլիացիք են խանգարողը—տաճիկներին պղծել ով չի ուզի:

Թէ Պարսկաստան են մտնում՝ նա էլ է ուրիշների թաթի

տակ—ուսներն ու անգլիացիք այդ երկիրը իրենց մէջ դադանք դաշնաբրով բաժանել են արդէն: Անգլիացի կապիտալիստները ուսներին ասել են՝ «Դուք հիւսիսում թալանեցէք պարսիկներին. մենք հարաւում»: Ասել են ու սկսել թալանել խեղճ Պարսկաստանը. և այդ թալանի անուր դրել են՝ «պետական շահերի պաշտպանութիւն»: Պարսիկները խեղդոււմ են այդ պաշտպանութիւնից, իսկ ուսական և անգլիական Գուշկիճները, Կոովալուներն ու Մորոզոֆները իրենց չթեղէնը ծախոււմ են Պարսկաստանում և խնդում, ծիծաղում:

Միայն Պարսկաստանը չէ, որ թալանոււմ է աշխարհակեր թալանչիների ձեռքով: Եսպանական կապիտալիստները զէնքի աւժով իրենց ձեռքն են գցել մի ակազին երկիր՝ Կորէան:

Ռուս, գերմանացի, անգլիացի, ֆրանսիացի, եսպանացի, իտալացի և ամերիկացի կապիտալիստները եսպանական պատերազմից տաս տարի առաջ իրար մէջ բաժանեցին Չինաստանը և իրենց հազարաւոր զինւորների կեանքը զոհելով այդ թալանի համար, յայտարարեցին, թէ «Չինաստանը խաղաղացնելու համար չնայ այդ անում»: 1905 թւին ուսական կապիտալիստները Մանրիայի համար հարիւր հազարաւոր ժողովուրդ կոտորեցին: Անգլիացիք մի ամբողջ տէրութիւն վերցրին—բուրերի երկիրը:

Դա ծիծաղելի էր և այն պատճառով, որ պաշարման մասին մտածելն անգամ աւելորդ էր. իսկ թէ ինչու՞ այդ բանը շտաբին շատ լաւ յայտնի էր:

Չնայեամ այս բոլորին, առաւօտեան հանդիսաւոր կերպով հեռախօսով յայտնում են Կսեչինսկու պալատին, որ եթէ «ապրա-

տաժըները՝ գէնը ցած չը գնեն, կըսկուի պաշարումը: Պալատից, պատասխանեցին, որ պաշարման մասին խօսք չի կարող լինել, քանի որ պաշարածներ չկան, ապստամբ չկայ:

Օրանք փոփոխեց են: Յեւոյ սկսեց շաբաթի և իւնկերներէ շահառակութիւնները: Սև հարիւրեակը, որ մահու սարսափ էր գցել մենչեկիներէ ու էսէրներէ վրայ, (որոնց մաքաական խմբերը, յիշեմք այստեղ, բաշխիկներէ հետ փողոց էին դուրս եկել), քաղաքը իր ձեռքը վերցրեց: Սկսեց շարժն ու ձերբակալութիւնները սաանց Խորհրդի թոյլտուութեան:

Կարիք կմայ արդեօք շարունակելու պատմութիւնը: Յիշել արդեօք այն զգեստի զրգարութիւնը, որ սկսեցին տարածել Աննինի մասին, և կամ ինչպէս այդ ամբողջ գործի քննութիւնը յանձնեց մութ գործերի վարպետներին, ինչպէս հրաման դուրս եկաւ «զեկավարներին»՝ ձերբակալելու մասին և այլն և այլն...

Զարժէ, որովհետև բոլոր բանւորների ու զինւորների համար պարզ է, որ բոլշեիկների «դաւաճանութեան» մասին մատնիչների կազմած դոկումենտները, գերմանական միլիտներների մասին տարածւած զրգարութիւնը, բունտ ու ապստամբութիւն առաջ բերելու ամբաստանութիւնը, ինչպէս նաև լուրխի 3-ին ու 4-ին Գետերբուրգի փողոցներում սև հարիւրեակի բացած կրակը ժողովրդի վրայ—այս ամենը սև հարիւրեակն արաւ նրա համար, որ ոչնչացնի բոլշեիկների կուսակցութիւնը և նրան անլիզալ գրութեան դատապարտի:

Ինչպէս էին իրենց պահում յուլիսեան օրերին մենչեիկներն ու էսէրները: Արդեօք բանւորների ու զինւորների կոզմէ էին անցել: Ոչ: Նրանք կապիտալիստների ու կալւածատէրերի զիրկն էին ընկել: Փոխանակ իշխանութիւնը վերցնելու և աւլու Խորհուրդներին, նրանք նորից վազեցին բանւորների ու զինւորների թշնամիների մօտ, նորից կապիտալիստներից, կալւածատէրերից ու մանր բուրժուաններից կազմեցին կառավարութիւնը: Ոչ մի բանւոր, ոչ մի զինւոր չմտաւ այդ կառավարութեան մէջ: Այդ դեռ ոչինչ, մենչեիկներն ու էսէրները վերջնականապէս դաւաճանութեան անդունդը զլորելով, կառավարութիւնն ազատեցին Խորհրդի հսկողութիւնից, և Կերենսկին յայտարարեց, որ

ինքը, ինչպէս մի ժամանակ թագաւորը, պէտք է երկիրը կառավարի՝ միայն իր խզճի ու կարողութեան առաջ պատասխանատու զգալով իրեն: Կերենսկին, այն մարդը, որ երգում էր, թէ չի դաւաճանի յեղափոխութեանը, որ եթէ դաւաճանի, թող իրեն սպանեն, այդ րէտիցիոն, քաղցրալեզու շառախօսը, որ լակէյի նման վազոն նստեցրեց թագաւորին—լուս նայում էր, թէ ինչպէս են ձերբակալում և յոյնիսկ սպանում բոլշեիկ բանւորներին: Այդ մարդը հրամաններ է տալիս ձերբակալութիւնների կատարելու, օրհնում է թագաւորի ժամանակից անցած պրոկուրորին ու նրան ծառայող դատաւորներին՝ բոլշեիկների (Լենինի և միւսների) գէմ դաւաճան, զգեստի դատ յօրինելու և կեղծիքներ կատարելու համար, հրամաններ է արձակում բանւորների և զինւորների լրագիրները փակելու համար, վերականգնում է մահապատիժը, օրէնք է հրատարակում համազումարներն արգելելու և փակելու, անհաճելի մարդկանց աքսորելու, ինչպէս թագաւորի ժամանակ էին անում:

Այդպէս էր գործում կապիտալիստների ծառան, որ դահարձարանալու մասին էր երազում և արդէն թագաւորներին յատուկ զգեստի լեզուով էր սկսել խօսել: (Յես Կերենսկու գրութիւնը անգլիական թագաւորին):

Ինչ է էին անում այդ ժամանակ մենչեիկներն ու էսէրները: Կուսում էին սև հարիւրեակի, Ռոճեսնիօի գէմ, որ նստած էր Նիկոլայի Դումայում: Ամենեկն ոչ: Նրանք միայն ախ ու վախ էին քաշում, Կերենսկու արածներին հաւանութիւն տալիս և, մահու սարսափով բանւած, գողում կոնտր-բազմեղայից, այդ նոր «յեղափոխական պահնորդական բաժանմունքից», որի պետը սիրելի զափոխական պահնորդական բաժանմունքից», որի պետը սիրելի միսիստրն էր, «ժողովրդական հերոսը», «յեղափոխութեան պաշտպանն ու զաւաւարը», ինքը՝ Ալեքսանդր Տէօդորովիչ Կերենսկին:

Որպէսզի տակի լաւ, տակի խոր ըմբռնեմք Խորհուրդների համար բոլշեիկների մղած կռիւը և մենչեիկների ու էսէրների խայտառակ, հակաժողովրդական, հակայեղափոխական վախկոտ ընթացքը՝ անհրաժեշտ է անել մանրամասն քննութեան անել, թէ որտեղից է առաջ եկել բոլշեիկ և մենչեիկ անունները և ինչ թէ որտեղից է առաջ եկել բոլշեիկ և մենչեիկ անունները և ինչ հայեացք են ունեցել նրանք իշխանութեան մասին ու ինչպէս են կուսել նրա համար մինչև 1905 թիւը և 1917 թիւին:

Կ

Քոլչեիկներն ու մենչեիկները եւ նրանց ունեցած հայեացքը-
հշխանութեան համար մղող կուի մասին:

Քոլչեիկ և մենչեիկ անունները գոյութիւն ունին Ռուսաս-
տանի Սոց.-Դեմ. Բանուորական կուսակցութեան երկրորդ համա-
գումարից սկսած, որ տեղի ունեցաւ 1903 թւին: Իսկապէս դա-
սոցիալ-դեմոկրատների առաջին համագումարն էր, նախ այն-
պատճառով, որ ըստ կարգի առաջին համագումարը, որ տեղի
ունեցաւ 1898 թւին և հիմք դրեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկ-
րատիային—հնար չունեցաւ ծրագիր մշակելու, երկրորդ՝ այն
պատճառով, որ 1903 թւին երկրորդ համագումարը կարող էր
հպարտութեամբ ասել, որ Ռուսաստանում գոյութիւն ունի մի
մեծ, մասսայական բանուորական շարժում, որին թաղաւորն իր
հալածանքներով չէր կարող ոչնչացնել (առաջին համագումարին
մասնակցողները ձերբակալել էին համագումարից անմիջապէս
յետոյ):

Քոլչեիկ (մեծամասնական) և մենչեիկ (փոքրամասնական
անունները առաջ են եկել «մեծամասնութիւն» և «փոքրամաս-
նութիւն» բառերից: Երկրորդ համագումարում կուում էին երկու
հոսանքներ—համագումարի անդամների մեծ մասը այն կարծիքն
էր պաշտպանում, թէ բանուորների կռիւը ոչ միայն անտեսական
կռիւ է, այսինքն՝ ոչ միայն բանուորների գրութիւնը բարելաւելու
համար է մղում, այլև քաղաքական է, այսինքն՝ պետական իշ-
խանութեան դէմ է մղում, Ռուսաստանում՝ միապետութեան
դէմ, հանրապետութեան մէջ կապիտալիտանների դէմ: Համագու-
մարի անդամների փոքրամասնութիւնը այն կարծիքին էր, թէ
բանուորների կռիւը միայն անտեսական է:

Համագումարի անդամների մեծամասնութիւնը իրեն «իսկ-
բայական» էր անւանում, որովհետեւ մեծամասնութեան անդամ-
ները այն հայեացքների կողմակից էին, որ արծարծում էին
արտասահմանում հրատարակող «Искра» (կայծ) թերթում:

Բայց իսկբայականները էկոնոմիստների (տնտեսականների)
դէմ ձայն տալով իրենց հերթին բաժանուում էին մեծամասնու-
թեան և փոքրամասնութեան, որոնց հայեացքները մի քանի բան-
բում իրարէց տարբերում էին:

Համագումարում այդ տարբերութիւնները էական չէին
թւում, բայց կեանքը ցոյց տւեց, որ իսկբայականների այդ, ըստ
երևոյթին ոչ էական, տարբերութիւնները նրանց մեծամասնու-
թիւնից և փոքրամասնութիւնից երկու տարբեր կուսակցութիւն-
ներ են ստեղծելու—քոլչեիկներ և մենչեիկներ:

Ուրեմն քոլչեիկները (մեծամասնականները) երկրորդ համա-
գումարի իսկբայականների մեծամասնութիւնն են կաղմել, մեն-
չեիկները՝ իսկբայականների փոքրամասնութիւնը:

Իհարկէ կարևորը անունը չէ, անունը հնացած է անկասկած,
և արդէն անհրաժեշտ է դարձել ջնջել այդ անունները մեր
կեանքում:

Այս տեղեկութիւնը միայն նրա համար տալիք, որ ցոյց
տանք ընկերներին, թէ ինչ զղելիութեան են համում քոլչեիկ-
ները հակառակորդները, երբ խաւար, անգիտակից մասսաների
մէջ տարածում են, թէ քոլչեիկները «բուրժուաներ» են և որ
նրանք շատ փող ունենալու համար են քոլչեիկ կոչւում:

Երկրորդ համագումարում իսկբայականներին բաժանող տա-
րածայնութիւնները կողմակի դիտողին էական չէին թւում,
բայց հէնց այն ժամանակ քոլչեիկներն ասում էին, որ սխալ է
այդ կարծիքը:

Դեռ այն ժամանակ կարելի էր ասել, որ եղած տարածայ-
նութիւնները օրէցօր պէտք է աւելի խորանան ու անհաշտելի
դառնան:

Մանրամասն չխօսելով այդ տարածայնութիւնների մասին՝
կանգ կառնենք մի վերին աստիճանի կարևոր հարցի վրայ:

Այդ հարցը կուսակցութեան վերաբերմունքի հարցն է դէպի
«լիբերալներն ու լիբերալ-դեմոկրատները»՝ ներկայ կաղէտների
հայրերն ու ներկայիս կաղէտները, այլ խօսքով դէպի կապիտա-
լիստներն ու կալաճատէրերը:

Այդ բնկերները՝ առաջ, թաղաւորի ժամանակ, «սարսափե-

լի» յեղափոխականներ էին և մինչև անգամ արտասահմանում մի հանդէս էին հրատարակում «Освобождение» անունով:

Բողոքիկ Լենինն էր, որ կարողացաւ, ղեկավարելով մեր ուսուցիչ Մարքսի ուսմունքով, այդ պարոնների «յեղափոխականութեան» էութիւնն ըմբռնել, այդ՝ խօսքով յեղափոխական, գործով սահմանադրական ժողովրդական կողմնակիցների դիմակը պատռել. այլ խօսքով՝ կարողացաւ զուշակել, որ շատ շուտով, հէնց երկրորդ համազումարից յետոյ, իրենց գոյնը ցոյց են տալու այդ պարոնները, որոնք, դժգոհ լինելով թագաւորից, ցանկանում էին թագաւորի իշխանութեան տեղ հաստատել իրենց իշխանութիւնը թէ ժողովրդի և թէ թագաւորի դիւրին, զանազանելով, ինարկէ, թագաւորի գահը:

Այդ հարցը պառակտում առաջ բերեց իտիրայականների մէջ, ստեղծելով մեծամասնութիւն և փոքրամասնութիւն: Մեծամասնութիւնը Չլխանովի ու Լենինի հետ զանում էր, որ միակ ուղիղ ճանապարհն այն է, որ համազումարը իր սկզբունքային, ճիմնական հայեացքն արտայայտի ղէպի լիբերալ բուրժուազիայի կատարելիք դերը Ռուսաստանում և թէ ինչ դիրք պէտք է բռնի սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը այդ բուրժուազիայի հանդէպ:

Փոքրամասնութիւնը, որի մէջ էին Գուրեսովը, Մարաովը և Ակսելրոզը, որոնք յետադաշում այնպէս խիստ կերպով բաժանակցին բողոքիկներէր, այդ փոքրամասնութիւնը այն կարծիքն էր պաշտպանում, թէ համազումարը պէտք է որոշի, թէ երբ կարող են սոցիալ-դեմոկրատները համաձայնել բուրժուազիայի հետ և երբ ոչ:

Բողոքիկների հայեացքի էութիւնը հէնց սկզբից այն էր, որ բանւոր դասակարգի յեղափոխական կուսակցութիւնը չպէտք է զբաղի այն հարցով, թէ ինչպէս պէտք է համաձայնութիւն կայացնել կապիտալիստների ու կալաժառանգների շահերը պաշտպանող կուսակցութիւնների հետ. բանւոր դասակարգի կուսակցութեան վերաբերմունքը ղէպի բուրժուազիան պէտք է լինի այն, և միմիայն այն, որ բանւոր դասակարգի մղած կռիւը չմթաղնի զանազան համաձայնութիւններով բանւորների թշնամիների

հետ: Մեղակցնել բուրժուազիայի երկերեսանի, դաւաճան քաղաքականութիւնը, ոչ թէ համաձայնել նրա հետ, կուել կապիտալիստների ու կալաժառանգների ղէմ և ոչ թէ համաձայնել նրանց հետ — ահա միակ ամպարիկան, որ պէտք է ունենայ սոցիալիստական բանւորական կուսակցութիւնը բուրժուազիայի հանդէպ:

Այս կարևոր հարցն էր ահա, որ պառակտում տուալ բերեց սոցիալ-դեմոկրատիայի երկրորդ համազումարում: Թէ ընկեր բանւորները և թէ զինւորները այժմ հասկանում են, որ զուր չեն բողոքիկները մասնացոյց անում այն սիբալիք վերաբերմունքի վրայ, որ ունեն մեղակցները ղէպի կապիտալիստներն ու կալաժառանգները:

Տեսնենք, թէ կապիտալիստներն ու կալաժառանգներն հետ համաձայնութեան գալու համար մեղակցները ինչն էին բաւակա համարում երկրորդ համազումարում:

Երեք պայմաններ. 1) եթէ բուրժուաները «պարզ ու շիտակ յայտարարեն, որ միապետական կառավարութեան ղէմ իրենց մղած կուսում նրանք վեճակածօրէն կանցնեն Ռուսաստանի սոց-դեմոկրատիայի կողմը»:

Բոլոր բանւորներն ու զիւղացիները այժմ շատ լաւ գիտեն, թէ ում կողմն էին ամցած Միլիկովները, Շինդարեովները, Ռոսկոնիկովն, կոնովալովներն ու միւս բուրժուաները 1903 թւին, ձեռնկոն, կոնովալովներն ու միւս բուրժուաները 1905 թւին՝ բանւորական պառակտման ժամանակ, երբ Գուրեսովն ու Մոսկուայի ազատամբութեան ժամանակ, երբ Գուրեսովը շնորհաւորում էր Գուրեսովին՝ Մոսկուան բանւորների արիւնքով ներկելու համար. բանւորները ծանօթ են նրանց բռնած ընթացքին բոլոր չորս Գուրեսովներում և այժմ, պատերազմի ժամանակ և 1917 թւի յեղափոխութեան ընթացքում, երբ պարոն Մասկոնիկովները, կալաժառանգներն ու կապիտալիստները սրիկաներ, ու շարժառանգներ են անւանում Խորհուրդների անդամներին, բանւորներին ու զինւորներին:

2) եթէ կապիտալիստներն ու կալաժառանգները «իրենց ծրագիրներում այնպիսի պահանջներ չեն դնի, որոնք հակասէին բանւոր դասակարգի և ընդհանրապէս դեմոկրատիայի շահերին կամ մթաղնէին նրանց զիտակցութիւնը»:

Բայց միթէ այժմեան կաղէտները հակառակ չեն գնում բանւորների ու գիւղացիների ցանկութիւններին ու ձգտումներին, միթէ նրանք հակառակ չեն հողը գիւղացիներին յանձնելուն, միթէ նրանք Խորհուրդների դէմ չեն, և միթէ այժմ մենշեիկներն ու էսէրները նրանց կողքին չեն նստած միևնոյն կառավարութեան մէջ *), այն կառավարութեան, որը վերականգնեց մահապատիժը, անդատատան բանտարկութիւնները, արգելեց ժողովներն ու համադրումարները, փակեց բանւորների ու գիւրուրների լրագիրները: Գուցէ այդ ներելի էր էսէրներին, որոնց մասին երկրորդ համադրումարում սոց.-դեմոկրատներն ասացին, թէ նրանք բուրժուազիայի հետ համաձայնողների մի կուսակցութիւն են կազմում. բայց ինչ ասենք մենշեիկներին, որոնք իրենց սոցիալիստ են անւանում:

3) Եթէ լրերալինները՝ այժմեան կաղէտները, կապիտալիստներն ու կալաժատէրերը կողմնակից կը լինեն ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի ընտրական իրաւունքին:

Բայց միթէ այժմ կաղէտները, այդ կապիտալիստներն ու կալաժատէրերը խօսքով կողմնակից չեն դրան: Միթէ նրանք այժմ Էստրադակապիտալիստական չեն անւանում իրենց: Եւ միթէ այժմ այդ բանը խանգարում է նրանց կուել Խորհուրդների դէմ և իրենց հաշիւները մաքրել այն բանւորների ու գիւրուրների հետ, որոնք համարձակում են կուել հաշտութեան և սոցիալիզմի համար: Միթէ նրանք չը ստիպեցին կերենսկուն յեղափոխութեան դաւաճան դռնալու:

Տեսնենք այժմ ինչ հայեացք ունեն բոլշեիկները բուրժուազիայի նկատմամբ և ինչ էին նրանք խորհուրդ տալու բանւորներին:

Դեռ 1898 թւին բոլշեիկ Լենինը, որին մատնիչ Երմոլենկովի կեղծ դոկումենտների հիման վրայ մեղադրում էին գաւաճանութեան մէջ, էր մի յօգւածում, որ կրում էր «Ռուսաստանի սոց.

*) Անդրկովկասում նրանք դեռ ևս սիրով նստած են կապիտալիստների ու կալաժատէրերի կողքին միևնոյն կառավարութեան մէջ. բայց Ռուսաստանում դրանց կառավարութիւնն արդէն տապալւած է: Ա. Թ.

դեմոկրատների անելիքը» վերնագիրը, ասում էր, որ սոցիալիստները միշտ «պէտք է ընդգծեն զրոյեւտարիտաթի գասակարգային տաւաճանութիւնը, որովհետեւ պրոլետարիտաթը կարող է վաղը իր այսօրեան դաշնակիցների դէմ գնալ»:

«Միայն այն կուողներն են ուժեղ, ասում էր Լենինը իր այդ յօգւածում, որոնք յենում են որոշ գասակարգերի գլխակցած ըէալ շահերի վրայ, և չմեն մի բողարկումն այդ գասակարգային շահերի, որոնք արդէն տիրապետում են ժամանակակից հասարակութեան մէջ, միմիայն կը բուլացնի կուողներին» (Եր. 140 հ. I վլ. Իլին):

Եւ միթէ գասակարգային շահերի բողարկումն չէ այն, որ սոցիալիստները կաղէտներէ հետ համաձայնութեան են գալիս: Պարզ երևում է, որ բոլշեիկների և մենշեիկների տարաձայնութիւնները նոր տարաձայնութիւններ չեն:

Չափազանց կարևոր է այստեղ յիշել, երբ խօսք է բացւել անցեալի մասին, թէ ինչպէս էին վերսբերում բոլշեիկներն ու մենշեիկները 1905 թւին սոցիալիստների՝ բանւորների և գիւղամենշեիկները 1905 թւին սոցիալիստների՝ բանւորների և գիւղամենշեիկները յեղափոխական կառավարութեան հարցին ժացիներէ այդ ներկայացուցիչների մասնակցութեան հարցին ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան մէջ, 1903 և 1904 մանակաւոր յեղափոխական կառավարութեան հարցին յեմոնստրացիաթականներին էր, որ երբ բանւորները իրենց դեմոնստրացիաներով և ստիպանութեան հետ ունեցած ընդհարումներով ցնցում էին թագաւորի գահը, մենշեիկները նրանց ետ էին քաշում և խորհուրդ տալիս՝ յաճախել բուրժուազիայի միտինգներին և իրենց ճառերով բուրժուազիային չը վախեցնել:

1905 թւի մայիսին, յեղափոխական շարժման ամենատաք ժամանակը, բոլշեիկների երրորդ համադրումարը, որ տեղի ունեցաւ Լոնդոնում, ըեզոլիւցիա (որոշում) հանեց ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան մասին. նոյն 1905 թւին մենշեիկների ունեցած խորհրդակցութիւնը ևս ժենեում իր բեզոլիւցիան ունեցաւ իշխանութիւնը վերցնելու և ժամանակաւոր կառավարութեան մէջ մտնելու մասին:

Ահա այդ բեզոլիւցիաները:
 Բոլշեիկների III համադրումարի բեզոլիւցիան ասում է.
 «Նկատի ունենալով՝

1) Որ պրոլետարիատի թէ անմիջական շահերը և թէ սոցիալիզմի վերջնական նպատակների համար նրա մղած կռիւ շահը պահանջում է ըստ հնարաւորին լիակատար քաղաքական ազատութիւն, հետեւողէս և կառավարութեան միապետական ձևի փոխարինումը դեմոկրատական հանրապետութեամբ:

2) Որ դեմոկրատական հանրապետութեան հաստատումը Ռուսաստանում հնարուոր է միմիայն ժողովրդական յաղթական ապստամբութեան միջոցով, որի օրգանը լինելու է յեղափոխական ժամանակաւոր կառավարութիւնը, որ կարող կը լինի ապահովել նախընտրական ազիտացիայի լիակատար ազատութիւնը և գումարել ընդհանուր, հաւասար և անմիջական ընտրական իրաւունքով ու գաղտնի ձայնաւորութեամբ Հիմնադիր ժողով, որը ժողովրդի իսկական կամքը կարտայայտի, որ այդ դեմոկրատական յեղաշրջումը Ռուսաստանում նրա ներկայ հասարակական-անասական պայմաններում ոչ թէ կը թուլացնի, այլ կուժեղացնի բուրժուազիայի տիրապետութիւնը, որն անպատճառ փորձ կանի որոշ ժողովուրդ, կամք չունենլով ոչ մի բանի տաջ, խլել Ռուսաստանի պրոլետարիատից յեղափոխութեան ընթացքում ձեռք բերած նւաճումները ըստ հնարաւորին մեծագոյն մասը—

Ռուսաստանի Սոց. Դեմ. Բան. Կուսակցութեան III համագումարը գտնում է՝

ա) որ անհրաժեշտ է բանուոր դասակարգի առաջ կոնկրետ կերպով պատկերացնել յեղափոխութեան ամենտեսանական ընթացքը և նրա որոշ մոմենտում ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան երևան գալու անհրաժեշտութիւնը, որից պրոլետարիատը կը պահանջի իրագործել մեր ծրագրի (մինիմում ֆորգրի) բոլոր մօտուոր քաղաքական և անտեսական պահանջները:

բ) նկատի առնելով ուժերի փոխաբաշխութիւնը և այլ ֆակտորներ, որ նախօրոք անկարելի է հշուութեամբ որոշել, թոյլատրելի է մեր կուսակցութեան լիազօրների մասնակցութիւնը ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան մէջ՝ անխնայ կռիւ մղելու բոլոր հակաիդափոխական փորձերի դէմ և պաշտպանելու բանուոր դասակարգի ուրոյն շահերը:

գ) այդպիսի մասնակցութեան անհրաժեշտ պայմանը պէտք լինի կուսակցութեան խիտ կոնտրոլը իր լիազօրների վրայ. և սոցիալ-դեմոկրատիան, որ ձգտում է սոցիալիստական լիակատար յեղաշրջումն կատարել և այդ տեսակետից անհաշտ թշնամի է բոլոր բուրժուական կուսակցութիւններին, անշեղ կերպով պէտք է անկախութիւն պահպանի:

Անկախ այն հարցից՝ թէ կարելի կը լինի արգեօք սոցիալ-դեմոկրատիայի մասնակցութիւնը ժամանակաւոր յեղափոխական կառավարութեան մէջ, պէտք է պրոլետարիատի ամենալայն խաւերում տարածել այն գաղափարը, որ անհրաժեշտ է շարունակ ճնշում գործ դնել ժամանակաւոր կառավարութեան վրայ զինւած մեղադրիչ յեղափոխութեան նւաճումները պաշտպանելու, ամբացկողմից՝ յեղափոխութեան նւաճումները պաշտպանելու, ամբացնելու և լայնացնելու համար:

Մենչևիկների կողմից սոցիալիստի բեզդիւցիան ցիշխանութիւնը վերցնելու և ժամանակաւոր կառավարութեան մէջ մասնակցելու մասին—

«Յեղափոխութեան վճռական յաղթանակը միապետութեան դէմ՝ կարող է պատկազրել կամ ժողովրդական ապստամբութիւնից ծնած ժամանակաւոր կառավարութեան հաստատումով, կամ նրա է ներկայացուցչական հաստատութեան յեղափոխական նաօրէ է ներկայացուցչական հաստատութեան յեղափոխական խաճենութեամբ, որը ժողովրդի անմիջական յեղափոխական ճնշման տակ կը վճուի գումարել Համաժողովրդական Հիմնադիր ժողով:

Այս թէ այն դէպքում նման յաղթութիւնը սկիզբն է դնելու յեղափոխութեան մի նոր շրջանի:

Հասարակական զարգացման օրէկալու պայմանները տարբերաբար այդ նոր շրջանի առաջ դնելու են լուծելու մի խնդիր— միապետական-դասային բեժիմի վերջնական լիկւիդացիան, որը տեղի է ունենալու քաղաքականապէս ազատագրւած բուրժուական հասարակութեան տարբեր տարբերի փոխադարձ կռիւ պրոլետարիատի իրենց սոցիալական նպատակների իրագործման և իշցեսուում՝ իրենց սոցիալական նպատակների իրագործման և իշխանութիւնը իրենց ձեռքն առնելու համար:

Ուստի և ժամանակաւոր կառավարութիւնը, որ յանձն է

առնում լուծելու այն հարցերը, որ դնում է նրա առաջ այս՝ բնութով բուրժուական՝ յեղափոխութիւնը, պէտք է ազատագրող ժողովրդի ներակ դասակարգերի փոխադարձ կռիւր կանոնաւորելով ոչ միայն առաջ տանի յեղափոխութեան զարգացումը, այլ և կռի այն Փակտորների դէմ, որոնք սպառնում են կապիտալիստական կարգերի հիմքերին:

Այդպիսի պայմաններում սոցիալ դեմոկրատիան պէտք է ձգտի յեղափոխութեան ամբողջ ընթացքում տնայիսի դիրք բռնել, որ աւելի մեծ հնարաւորութիւն տայ նրան յեղափոխութիւնն առաջ տանելու, չը կաշկանդի նրան բուրժուական կուսակցութիւնների անհետեւողական ու շահամու ջաղաքականութեան դէմ կռելիս և արգելք հանդիսանայ նրան լուծելու բուրժուական դեմոկրատիայի մէջ:

Այդ պատճախով սոցիալ-դեմոկրատիան չպէտք է նպատակ դնի իր ձեռքն առնելու իշխանութիւնը կամ մտնելու ժամանակաւոր կառավարութեան մէջ, այլ պէտք է մնայ որպէս ծայրայեղ յեղափոխական օպոզիցիայի կուսակցութիւն:

Ինչով է նշանաւոր բոլշեիկները ընդդիւցիան:

Առաջին նրանով, որ այդ ընդդիւցիան պարզ ու որոշակի, ամենախիստ կերպով բաժանելով բանւոր դասակարգի շահերը բուրժուազիայի շահերից ու ձգտումներից՝ գուշակում էր, որ յեղափոխութիւնը Ռուսաստանում ոչ թէ կը թուլացնի, այլ կուժեղացնի բուրժուազիայի տիրապետութիւնը, որն անպատճառ փորձ կանի որոշ մոմենտում՝ կանգ չառնելով ոչ մի բանի առաջ՝ խլել Ռուսաստանի պրոլետարիատից յեղափոխութեան ընթացքում ձեռք բերւած նւաճումների՝ ըստ հնարաւորին՝ մեծագոյն մասը:

Եւ իսկապէս ոչ մի բանի առաջ կանգ չառնելով, ամեն ինչ գործադրելով, մինչև անգամ դաւաճանութեան մէջ մեղադրելով այդ խօսքերի գրողին՝ բուրժուազիան այժմ փորձ է անում խլելու բանւորներից ու գիւղացիներից այն, ինչ որ նրանք ձեռք են բերել փեարաբրինա եւ ոչ միայն փորձ է անում, այլ արդէն խլել է բանւորներից ու գիւղացիներից համարեա բոլոր ազատութիւնները. չկայ մամուլի, ժողովների ազատութիւն, առանց դատա-

տանի բանտարկում են մարդկանց բայց կայ մահապատիժ, ազատւած են Շտիւրմերը, Գորեմեկինը, Գուրկոն, պրոլետարիաներն ու մամուլիները:

Արդեօք ձեռք չէին ընդունել բոլշեիկները բուրժուազիայի դերն ու վարմունքը դեռ 1905 թւին, յեղափոխութեան հէնց հետեւել օրը:

Երկրորդ՝ նոյն ընդդիւցիայում պարզ ու որոշ առաջ է թէ ինչ պայմաններում է հնարաւոր բանւորների ներկայացուցիչների մասնակցութիւնը ժամանակաւոր կառավարութեան մէջ: Ընկառի առնելով ուժերի փոխյարաբերութիւնը և այլ ֆակտորներ, որ նախօրօք անկարելի է ճշտութեամբ որոշել...», առաջ է ընդդիւցիայի մէջ:

Ուրեմն, նախ քան որոշելը, թէ հարկաւոր է արդեօք սոցիալիստներին՝ բանւորական կուսակցութեան անդամներին՝ ուղարկել ժամանակաւոր կառավարութեան մէջ մասնակցելու — բանւորական կուսակցութիւնը պէտք է հաշի առնի, կշռի հասարակական ուժերի փոխյարաբերութիւնը և մոմենտի այ՝ բոլոր բանական զորքերի փոխյարաբերութիւնը և մոմենտի այ՝ բոլոր պայմանները, որ պրոլետարիատի դասակարգային դիրքերում պայմանները բաղաբան լուրջ գործիչները կարող կը լինեն նկատել ու հաշի առնել, և ապա միայն ասի՝ այո կամ ոչ:

Իսկ թէ կողմակից լինելով ժամանակաւոր կառավարութեան մէջ մասնակցելուն և թէ հակառակ լինելով այդ մասնակցութեանը՝ բոլշեիկները դեռ 1905 թւին ասում էին, որ այդ երկու դէպքում էլ անհրաժեշտ է զբարունակ ճշում գործ դնել ժամանակաւոր կառավարութեան վրայ զինւած ու սոց-դեմոկրատիայի ձեռքով առաջնորդող պրոլետարիատի կողմից՝ յեղափոխութեան նւաճումները պաշտպանելու, ամրացնելու և լայնացնելու համար:

Ինչով էր ճիշտ բոլշեիկական հայեացքը ժամանակաւոր կառավարութեան մէջ մտնելու հարցում: Նրանով, որ բոլշեիկները յեղափոխութեան պոստպոնուքիւնը, ամբարձումն ու լայնացումը գտնում էին ու գտնում են ոչ թէ առանձին անհատների մէջ, որքան էլ այդ անհատները լաւ մարդիկ լինէին, այլ այն մշտապէս կան «ճնշման» մէջ, որ բանւորներն ու գիւղացիները գործ էին

գնելու կառավարութեան վրայ. նրանով, որ ոչ թէ մի կերեխակու պատասխանատուութիւնն էր կարևոր համարուած միայն իր խղճի առաջ, այլ ժամանակակաւոր կառավարութեան պատասխանատուութիւնը ազատութիւն ձեռք բերող ժողովրդի առաջ:

Թէ ինչպէս էին նայուած բուլղարիկները փեարարը—յուլիս ամիսներին իրենց ներկայացուցիչների մասնակցութեան խնդրին ժամանակակաւոր կառավարութեան մէջ՝ մենք այդ հարցին կը դառնանք յետոյ. այժմ անսննդ թէ մենչիկները 1905 թւին ինչ էին ասում սոցիալիստների մասնակցութեան մասին ժամանակակաւոր կառավարութեան մէջ:

Ինչքան էլ անհաւատալի թւայ, բայց իրողութիւնն այն է, որ մենչիկները 1905 թւին հակառակ էին ժամանակակաւոր կառավարութեան մէջ մտնելուն:

«...Սոցիալ-դեմոկրատիան,—ասում էին մենչիկները,—չպէ՛ս է նպատակ դնի իր ձեռքն առնելու իշխանութիւնը կամ մասնակցելու ժամանակակաւոր կառավարութեան մէջ, այլ պէ՛տ է մնայ որպէս ծայրայեղ յեղափոխական օպպոզիցիոնայի կուսակցութիւն»:

Այն կուսակցութիւնը, այն մենչիկները, որոնք հակառակ էին սոցիալիստների մասնակցութեանը ժամանակակաւոր կառավարութեան մէջ՝ մինչև ստրական պորաֆեյնների հոտն առան թէ չէ, վրայ ընկան մինչև ստրական աթոռներին տիրանալու, մոռանալով թէ իրենց որոշումը և թէ պրոլետարիատի շահերը:

Ինչու չէին օւզում նրանք ժամանակակաւոր կառավարութեան մէջ մտնել 1905 թւին: Որովհետև վախենում էին իրենց ձեռքերը զկաշկանդել բուրժուական կուսակցութիւնների անհետողական ու շահամոլ քաղաքականութեան դէմ կուռլիս, որովհետև ուզում էին իրենց կուսակցութիւնը շաղկապել բուրժուական զեմոկրատիայի մէջ լուծելուցս:

Որևէ փոփոխութիւն կրէլ է մենչիկների կարծիքով հասարակութեան էութիւնը 1905 թւի համեմատութեամբ: Փոխուել է արդեօք յեղափոխութեան բնոյթը: Ոչ. մենչիկները Ռուսաստանի յեղափոխութիւնը 1905 թւին էլ էին բուրժուական համարում, հիմա էլ են բուրժուական համարում:

Բայց այն ժամանակ, 1905 թւին, ժամանակակաւոր յեղափո-

խական կառավարութիւնը չկար: Ճիշտ է. սակայն չէ որ թէ բուլղարիկների և թէ մենչիկների բեզոլլիցիաները 1905 թւին ապագայ յեղափոխական կառավարութեան մասին էին խօսում:

Այժմ այդ յեղափոխական «կառավարութիւնը» իրողութիւնն է. և բուլղարիկները հաւատարիմ 1905 թւին իրենց հանած բեզոլլիցիային՝ նկատի օտնելով նոր, փոփոխուած պայմանները, որոնց չէր կարելի նախատեսել սրանից 12 տարի առաջ, ասում են՝ դարձեալ իրենց բեզոլլիցիայի ոգուն համաձայն՝ որ ամբողջ իշխանութիւնը պէ՛տ է աւել Խորհուրդներին:

Իսկ մենչիկները, որոնք թէ 1905 և թէ 1917 թւի յեղափոխութիւնը բուրժուական են անունում, այժմ արդէն էլ չեն վախենում իրենց կուսական մարքութիւնն ու անմեղութիւնը կըրցնելուց, չեն վախենում իրենց ձեռքերը կաշկանդելուց և մտնում են (և այն էլ ինչպէս են մտնում) ժամանակակաւոր կառավարութեան մէջ այն պայմաններով, որ թելադրում են նրանց Միլիկովի ու Ռոձեանկոն, ժողովրդի այդ թշնամիները:

Ինչու: Որովհետև մենչիկներն ու էսէրները մանր բուրժուազիայի կուսակցութիւններն են, որ երկերեսանի է իր բնութեամբ, որովհետև մանր բուրժուան, այդ Ծերեթեթիները, կերենսկիները, Դաները, Վոյախնսկիները, Բոգդանովիներն ու Կրեբրները, ինչքան էլ նրանք առաջ յեղափոխական լինէին (պոր. հոգմինը՝ Պետերբուրգի Զինու. Շրջանի գլխաւոր հրամանատարի օգնականը՝ Նոյնպէս յեղափոխական էր, բայց յետոյ կոնտր-բազմեղկայի կառավարիչը դարձաւ: Կերենսկին, երբ դեռ «խեղճ, ազնիւ փաստաբան էր, պաշտպանում էր հասարակ մահականացուններին, բայց յետոյ մահապատժի վերականգնողը եղաւ), այդ բոլոր մանր բուրժուաները մի կողմից բանւոր զսասկարգի անունով են երդում (չէ որ հիմա առանց բանւորի անունը տալու կաղեխներն անգամ խօսք չեն ասում), իսկ միւս կողմից կապիտալիստներին ու կալւածատէրերին պաշտպանում:

Մանր բուրժուազիան ամեն տեղ և ամեն ժամանակ այդպէս է, բացի այն մտնաններից, երբ յեղափոխական բանւորը ուժով ստիպում է նրան իր ետևից զնալու:

Ո՞վ էր զործով, և ոչ խօսքով, կուռում իշխանութեան հա-

մար. մենչեկինները, որոնք իրենց ձեռքերը կապել էին կապի-
տալիստների ու կաղետների հետ համաձայնութեան գալով և
պրոլետարիատին թալանչիների ձեռքը տալով, թէ՛ բուլչեկիները,
որոնք գործով, բանւորական լայն խաւերը կազմակերպելով,
փորձում էին իշխանութիւնը Խորհուրդների ձեռքը տալու և
զրոնք այդ բանը չկարողացան*) անել այն պատճառով, որ թէ
Խորհուրդների մէջ, շնորհիւ նրանց կազմի, և թէ մանր բուրժու-
ազիայի ղեկավարների կողմից յամառ դիմադրութեան հանդի-
պեցին:

Մանր բուրժուազիայի ղեկավարները ներկայումս յեղափո-
խական չեն Ռուսաստանում, նրանք իրենց դասակարգը տանում
են բանւորների և գիւղի պրոլետարների ու կիսապրոլետարնե-
րի դէմ, և նրանք, միացած խոշոր բուրժուազիայի հետ, դուրս
ուկան բանւոր դասակարգի դէմ:

Նւ բանւոր դասակարգը ժամանակաւորապէս յաղթեց:

VI.

Բանւորական և Զինւորական Պատգամաւորների Խորհուրդ-
ները, նրանց կազմը, կատարած դերը և յեղափոխական ըն-
տրի անելիքը:

1917 թւի փետրւարեան յեղափոխութիւնը կատարեց պրո-
լետարիատի և զինւոր-գիւղացիների ձեռքով, բայց յեղափոխու-
թիւնից յետոյ իշխանութիւնն անցաւ բուրժուազիալ՝ կապիտա-
լիստների ու կալաժատէրերի ձեռքը:

Բանւորներն ու զինւոր-գիւղացիները, որոնք զինւած ազըս-
տամբութեամբ թագաւորի գահը խորտակեցին, իրապէս իշխա-
նութեան տէքն էին, որովհետև զինւած էին, ուժը նրանց ձեռ-

*) Խօսքը նախ-հոկտեմբերեան շրջանին է վերաբերում: Ա.Թ.

բին էր և ոչ ոք չէր կարող խանգարել նրանց՝ իշխանութիւնը
իրենց ձեռքն առնելու:

Նւ սկզբում, մարտին ու ապրիլին, դեռ ևս կարիլի էր մտա-
ծել, թէ իշխանութիւնը կարող է բոլորովին խաղաղ ճանապար-
հով անցնել ժողովրդի մեծամասնութեան ներկայացուցիչների
ձեռքը:

Խորհուրդների կողմն էին ոչ միայն բանւորները, այլ և
ազգաբնակչութեան այն մասը, որ, ինչպէս օր. քաղաքներում,
բնակչութեան մանր բուրժուազիայի մասսան է կազմում:

Ինչպէս եղաւ, որ իշխանութիւնն այնուամենայնիւ բուր-
ժուազիայի ձեռքին մնաց և ոչ բանւորների:

Ինչ՞ու այժմ երկիրը կառավարողը հերենսկին է, «կամօքն
կապիտալիստների ու կալաժատէրերի» ինքնակալ միապետը.
գլխաւոր շտաբի ու կոնտր-բաղւեղկալի հետ, իրենց բոլոր հրա-
շալիքներով՝ գործադրելով մահապատժի օրէնքը Ֆրոնտում, աք-
սորելով մարդկանց առանց դատի ու քննութեան, փակելով լրա-
զիրներն ու ժողովները:

Պատասխանը շատ պարզ է:

Խորհուրդների կազմն էր նրան անյաջողութեան մատնում
իշխանութեան համար իր մղած ջիւղում: Աւելի ճիշտ՝ Խորհուրդ-
ները, շնորհիւ իրենց կազմի, անընդունակ էին իշխանութեան
համար կռիւ մղելու:

Խորհուրդներում իշխողները մենչեկիներն ու էսէրներն էին:
Դրանք իրենց էութեամբ մանր-բուրժուական, անվճռական,
վախկոտ, համաձայնութեան կողմնակից կուսակցութիւններ են:

Դրանց իշխող գերբը Խորհուրդներում հետևանք է այն
բանի, որ Խորհուրդների անգամների մեծամասնութիւնը բաղկա-
ցած է ոչ թէ աղքատ գիւղացիութեան ներկայացուցիչներից, այլ
մանր, ունևոր գիւղացիներից և բուրժուազիայի ազդեցութիւնից
դեռ ևս չապատուած բանւորների մի մասից:

Ինչ՞ու այդպիսի կազմ ունեցան Խորհուրդները՝ Որովհետև
ինքը Ռուսաստանը նոյն պատկերն ունի: Ռուսաստանում մինչև
այժմ գերակշռողը մանր բուրժուազիան է, որը հէնց իր գերբի
պատճառով անկարող է մաքուր դասակարգային քաղաքականու-
թիւն ունենալ և բարձ է գալիս խոշոր բուրժուազիայի ետևից:

Այդ պատճառով Խորհուրդները այնպիսի ղեկավարները՝ որպիսին Իսանն է Մերթթելին, Չերնովն ու Կերենսկին, չէին կարող ու չեն կարող զուտ պրոլետարական, յեղափոխական ակտիվայի հետևել:

Քրովհեռև, դեռ ապրիլի 21-ին, երբ դեռ ևս կարելի էր խաղաղ կերպով, առանց արևնհեղութեան իշխանութիւնն իրենց ձեռքն առնել, մենշևիկներն ու էսէրները չարեցին այդ բանը:

Իրա փոխարէն նրանք սակարգութիւն սկսեցին կազմանների հետ մինիստրական տեղերի համար և կապիտալիստներին ու կալաճատէրերին իրենց օգնութեան կանչել:

Այդ դեռ ոչինչ—նրանք կուռում էին յեղափոխական պրոլետարիատի և զինուոր-գիւղացիների դէմ, որոնք Խորհուրդների վրայ գործ դրած իրենց ճնշումով փորձում էին ստիպել նրանց՝ իշխանութիւնն իրենց ձեռքն առնելու:

Մենշևիկներն ու էսէրները վախեցան այդ ճնշումից և երես դարձրին բանւորներից ու աղքատ գիւղացիներից:

Երբ յունիսի 10 ին յեղափոխական բանւորներն ու աղքատ գիւղացիները ուզում էին օգնել Խորհուրդներին իշխանութիւնը վերցնելու՝ Մերթթելին ուղղակի պատանայ յեղափոխական բանւորներին ու զինւորներին զինաթափ անել նրանց, այլ խօսքով ուժից զրկել:

Նա այդ անել չէր կարող. նրա տեղ այդ բանն արին Բոճեանկոն, Իուչկովը, Միլիկովը, Շինգարիովը, կապիտալիստներն ու կալաճատէրերը:

Ինչպէս եղաւ, որ նրանք, առանց իշխանութիւնն ունենալու իրենց ձեռքին, կարողացան այդ անել: Նրանց օգնեցին այդ բանն անելու մեծեւթիկներն ու կուրները:

Մենշևիկներն ու էսէրներն էին, և ոչ բոլշևիկները, որ Խորհուրդների հեղինակութեամբ, նրանց անունով օգնեցին յարձակման գործը կազմակերպելու, երբ զօրքն անպատրաստ էր և երկիրը ջար ու քանդ հղած, և պատճառ դարձան Ֆրոնտը պատուելուն, խառնաշփոթութիւնն առաջ բերին զօրքի մանր բուրժուական խաւերի գլխում և զօրքը կործանեցին:

Կուելով բոլշևիկները դէմ, պահպանելով զօրքի էին միակ

պատական հրամանատարական կողմը, հին, միապետական դատարանը, պահպանելով Պետական Դուռնն ու Պետական Խորհուրդը, կռիւ մղելով Յինւոնդիայի և Ուկրայնայի դէմ—մենշևիկներն ու էսէրները չարագանց ուժեղացրին ինպիսի լիտական բուրժուակիային:

Պատերազմի կողոպտիչ, աշխարհակալական նպատակները յաղթող հանդիսացան և խոտացուած խաղաղութեան փոխարէն Ռուսաստանն ունեցաւ նախկին աշխարհակալական, երկրներ կողոպտելու համար մղող պատերազմը, իսկ ժողովրդագլուխութեան փոխարէն—կապիտալիստների և կալաճատէրերի իշխանութիւնը, որի գլուխն էր անցած զինւորական դիկտատուրան, այսինքն ամենտակա յեղափոխական սև հարիւրակային զինւորականութիւնը, իր հաւատարիմ սպասաւոր Կերենսկու հետ:

Չինւորա-դաշտային դատարանները, մահապատիժը, առանց դատաստանի ու քննութեան արտոյնները, լրագիրների գրաւումն ու դադարացումները—ան Կերենսկու կռի միջոցները ժողովրդի դէմ:

Յուլիսեան դէպքերը Պետերբուրգի յեղափոխական բանւորների վերջին փորձն էր խաղաղ նսնայարիւով լուծելու իշխանութեան խնդիրը:

Բոլշևիկները փորձեցին բանւորների ու զինւորների արքային շարժուել դարձնել մի խողող միջոց՝ ստիպելու Խորհուրդներին, որ իշխանութիւնն իրենց ձեռքն առնին:

Այդ փորձը անյաջողութեան հանդիպեց: Բոլշևիկների, յեղափոխական բանւորների ու զինւորների հետ կռիւ դուրս եկան ամենքը՝ թէ կապիտալիստներն ու կալաճատէրերը (կուելով Աւգիտի ու Յուսիտի կապիտալիստների վրայ) և թէ բնակչութեան մանր բուրժուական խաւերը՝ մենշևիկների ու էսէրների առաջարկութեամբ:

Յեղափոխական պրոլետարիատը և աղքատ գիւղացիութիւնը յանձնեց Պետերբուրգի զինւորների ժամանակաւորապէս ետ մղելուցին իրենց զիբքերից իշխանութեան համար մղող այդ կուռում:

Ներկայումս կապիտալիստներն ու կալաճատէրերը, որոնք նսում են զօրքի անդիտակից մասի, շտաբի և սև հարիւրակա-

իին իւնկերների վրայ— իշխանութեան իսկական տէրն են, իսկ Խորհուրդները իրենց ղեկավար մենչեկի ու էսէր Ծերեթելու, Զխէիճէի, Զեքնովի և ուրիշների հետ— լոկ մի խօսարան, մի յարմար շիրմա, որի ետևը կապիտալիստներն ու կալածատէրերը իրենց գործերն առաջ են տանում և պատրաստութիւն տեսնում սանմանագրական (սահմանափակւած) միապետական իշխանութիւն հաստատելու:

Խորհուրդները կտարեցին իրենց դերը:

Նրանց դերը, նրանց նշանակութիւնը փետրւարից յուլիս աջն եղաւ, որ ցոյց տան բանւոր դասակարգի յեղափոխական մասին ու աղքատ գիւղացիութեանը, թէ ինչպէս պէտք է կուել իշխանութիւնը վերցնելու համար և թէ ինչ պայմաններ են հարկաւոր, որպէսզի իշխանութիւնը խաղաղ ճանապարհով անցնի Ժողովրդի ձեռքը:

Բանից դուրս է գալիս, որ բացի զինւած Ժողովրդից անհրաժեշտ է նաև բանւորների ու գիւղացիների իսկական ղեկավարների կողմից յեղափոխական վճռականութիւն, և ոչ թէ մանր բուրժուական ղեկավարների մանր-բուրժուական համաձայնելու քաղաքականութիւն:

Խորհուրդներն ապացուցեցին, որ նրանք Ժողովրդական մարուր յեղափոխական ստեղծագործութեան օրգաններ լինելով հանդերձ՝ հակայեղափոխութեան համար շիրմա են դառնում, եթէ նրանց մէջ մանր բուրժուականներն են իշխում:

Նրանք ցոյց տւին, որ յեղափոխական պրոլետարիատն ու աղքատ գիւղացիութիւնը պէտք է ձգտեն այնպիսի խորհուրդներ ստեղծել, որտեղ գերիշխողը լինեն յեղափոխական բանւորների և աղքատ գիւղացիների ներկայացուցիչները:

Սակայն այժմ, երբ իշխանութիւնը գտնուում է կապիտալիստների ու կալածատէրերի ձեռքին, խաղաղ ճանապարհով անկարելի է իրագործել այդ: Կապիտալիստներն ու կալածատէրերը առանց կուլի իշխանութիւնը չեն թողնի իրենց ձեռքից:

Հարց է առաջ գալիս, թէ կարելի է արդեօք սպասել, որ մօտ ապագայում այդպիսի մի կուլի տեղի կունենայ, որ բանւորների ու գիւղացիների յողթութեամբ պսակւի:

Պայմաններ շատ կան, որոնք ասում են, թէ մօտ է ապայ յողթական ճակատամարտը:

Իրան գրաւական՝ պարենաւորման քայքայումը, փողոյին անանկութիւնը, Ֆրոնտի նեղ զրութիւնը, ապաղայ սովը, գիւղական լայն մասսաների հրաթափումն իրենց առաջնորդների ընթացքից, մենչեկիկների ու էսէրների դաւաճան քաղաքականութիւնը:

Կապիտալիստների ու կալածատէրերի ոչ մի կառավարուչութիւն չի կարող վերահաս անանկութեան առաջն տանել:

Այդ պատճառով, մի կողմից պաշտպանելով արած նւաճումները (Ժողովների, գործադուլների, մամուլի, խօսքի, միութիւնների ազատութիւնը, Բանւորական ու Զինւորական Պատգամաւորների Խորհուրդները), յեղափոխական պրոլետարիատը և աղքատ գիւղացիութիւնը ժիւժածամանակ պէտք է իրենց ուժերը աւաքեն և, խուսափելով անկապ, անշատ քայլերից, պատրաստւեն վճռական ճակատամարտ տալու՝ իշխանութիւնն իրենց ձեռքն առնելու և հաստատելու յեղափոխական բանւորների ու աղքատ գիւղացիութեան գերիշխանութիւնը:

Միայն այդ գերիշխանութիւնը կարող է լիակատար ազատութիւն ապ բանւորներին, կոնարոյ հաստատել արդիւնաբերութեան վրայ, հող տալ գիւղացիներին և պայմաններ ստեղծել՝ ոտքիալիզմի համար անմիջական կռիւ սկսելու:

ՀՐԵՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԳՐԱԼԵՏԱՐ»

Փրֆիս, Георгіевская 1.

ԼՈՂՍ ԿՆ ՓԵՍԵԼ

- 1. Կնիքի—Յօգաւան ց. արտադրանքի և արտադրողի
ձայն (նուս.) — ր. 75 Կ.
- 2. Օր—սկի Կ. ար. Յարքու — ր. 25 Կ.
- 3. Կիչ—Երկուսուցից և արտադրողի ձայն (նուս. և կրօն) — ր. 50 Կ.
- 4. Կնիքի—Զննողների Յօգաւանի 3 րդ կ. ար. Կ. ար.
ձայն (նուս.) — ր. 50 Կ.
- 5. Երեսի—Որոշու և արտադրողի — ր. 50 Կ.
- 6. Յօգաւանի—Ինքնարձեռն — ր. 40 Կ.
- 7. Կիչիկ—Ի. Զ. արտ. արտադրողի ձայն (նուս.) — ր. 50 Կ.

Պ. Քեմանու և Կիս արտադրողի ձայն արժեքների — քանակ է
 Կ. ար. արտադրողի և կնիքի 16 ր. Կ.

«Պրոկտոր» կրթարտադրողի ձայն արժեքների և կնիքի 16 ր. Կ.
 կազմ է Կ. ար. արտադրողի և կնիքի 16 ր. Կ. և արտադրողի
 ձայնի 16 ր. Կ. և կնիքի 16 ր. Կ.

« Ազգային գրադարան



NL0184113

